

2092

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ՓԵՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ  
ԽՈՐՀՐԳԻՆԵՐՆ ԳՐՆԲԱՊԵՏՈՒԹԻՒՆ.

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

№ 12

Գ. ԼԻՆԴՈՎ

№ 12

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ  
ՄԵԾ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆԸ



Г. Линдов.

ВЕЛИКАЯ ФРАНЦУЗСКАЯ РЕВОЛЮЦИЯ.

Գրքերային Ինստիտուտի Իզատելային Սեկցիա. Արմանյան Սեկցիա.

9(44)  
Ձ-56

ՏՕՎ ՈՒ Ա ԴՈՆՍ.  
1920

30 MAY 2011

Գրականությունը բոլոր երկրներին, միացել է

24 JAN 2006

(44)  
- 55.  
այ.

300

Գ. ԼԵՆԻՆ

99-ՍԱ

**ՖՐԱՆՍԻԱԿԱՆ**

**ՄԵԾ ՑԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆԸ**

Գրիգոր-դոցենտ Ն. Ա. Տոժկովի առաջաբանով.



02 MAY 2013

2092

Государственное Издательство Армянская Секция.

Ростов н-Д.

### ԱՌՆԱԳՐԱՆ

Ֆրանսիական Մեծ Յեզափոխութիւնից յետոյ անցիլ է մի դարից աւել ժամանակամիջոց: Չնայած դրան այդ յեզափոխութիւնը շարունակում է գրաւել ոչ միայն մասնագէտ—հետազոտողների ուշադրութիւնը, որոնք պարտաւոր են ամեն մի պատմական էպօխից սոցիալիստական ընդհանրացումներ քաղել, որքան էլ հետազոտողներն այդ էպօխը, այլ և բոլոր նրանց, որոնք հետաքրքրոււմ են հասարակական հարցերով և ցանկանում են, յենեկով պատմական և սոցիոլոգիական ամուր ֆունդամենտի վրայ, գիտականօրէն լուծել այդ հարցերը:

Այդ թող դարձանալի չլինի: Անկասկած եւրոպական Արեւմուտքի ապրած բուրժուական բոլոր յեզափոխութիւններից, Ֆրանսիական Մեծ Յեզափոխութիւնն ամենից ականաւորն է: Յեզափոխութիւնն ոչ այլ ինչէ՛ եթէ, ոչ էւօլյուցիայի որոշ մօմենտ, որ թեւակոխում է այն ժամանակ, երբ պարզ արտայայտում է սոցիալական աններդաշնակութիւնը և իրաւական վերնաշէնքը (настройка) չափազանց յետ է մնում անտեսական բազիսից ու դադարում համապատասխանել նրան: Այն ձին կարգը, որ յարմարեցւած էր ճարտութեան սոցիալական-

14-е отделение Дониолиграфотдела Д. С. Н. Х.

5900 экз.

տնտեսական յարաբերութիւններին ու յարժարում որոշ չափով կապիտալիզմի վարդապետան առաջին տիճանի նախնական կենտրոնացման յատուկ պայմաններին— դառնում է արդէն յետամնաց՝ կապիտալիստական կենտրոնացման պայմաններէ վերաբերմամբ. այդ պատճառով էլ այդ պայմանները քանզում են կապանքները և տապալում դասերն ու արտոլիտալիստական-ճորտատիրական հասարակութեան և միջնաշէնքը և սահարգային հասարակակազմը և բուրժուական կան պետութիւնը:

Հասարակական և քաղաքական նոր ձևերը են մեծ տանջանքներից: Այդ ծնունդին ուղեկցում ժողովրդական մասսաների, բանւորների և գիւղացի ապստամբութիւններ, արիւնահեղ պատիժներ, եսկոցիների զիկատուերան, բուրժուական, հասարակութեան սոցիալիստական դարձնելու փորձը և թօնապարտի զարկովը: Շատ, եւ մինչև իսկ կուզէի ասել, ամեն սակեանքից, ճրանխական Մեծ Յեղափոխութիւնը պիտի բուրժուական է: Աւտի նրան ծանօթ լինելը, բուստ փաստացի նրութով և առանձնապէս պատմութեան և մասերիստական հասկացողութեամբ, դիտական հիմնաւորւած տեսակէտից, ունի առաջնակարգ նշանակութիւն ամեն մի մարդու համար, որ գիտակցօր վերաբերւում չըջապատող իրականութեան, Հասկ ճրանխական Մեծ Յեղափոխութեան պատմութիւնը և նշանակէ ընթացել ամեն մի բուրժուական յեղափոխեան վարդապետան օրէնքները:

Ինքնին հասկանալի է, որ այդ չի նշանակում

բարանչիւր բուրժուական յեղափոխութիւն նման է արանխականին, ինչպէս երկու կաթիլ ջուր: Բնութեան կանքում էլ չկան այդպիսի լիակատար կրկնութիւններ անպայման նմանութիւններ, մի քաշի ընկնելը ամեն անպայման նման չէ մի ուրիշի վայր ընկնելուն: Այնտեղ, ուր պատմական պատճառներով ամբացւած, իրաւական հին կենաշէնքը ուժեղ է— գլխաւորապէս այն պատճառով, որ կաթի կապիտալիստական փողային տնտեսութիւնը ձուլում միայնում է չափազանց մեծ տերիտորիայ և ընակչութեան հսկայական մասսաներ, այնտեղ այդ վերնաշէնքը յարազարում է ընականօրէն աւելի ինտրցիա, քան ճրանխայում, ցոյց տալիս աւելի յարատե գիւմադրութիւն նոր սոյժերի յորձանքին, դանդաղեցնում պրոցեսը և նրան դարձնում աւելի կատաղի ու տանջալից: Բայց միևնոյն ժամանակ նոյն հին կարգը կամայ լի է ակամայ նպատում է կեանքում կատարող տնտեսական պրոցեսին: Նա այդ պրոցեսի առանձին արտայայտութիւններին շաճախ տալիս է այլանդակ ու հիւանդոտ ձևեր, սակայն կապիտալիզմի յաղթական կառքնանչի առաջ է ընթանում: Եւ միաժամանակ՝ աճում ու կազմակերպւում են նոր սոյժեր, որպէս սպազայ նոր յաղթութեան գրաւական՝ գիտակից պրոլետարիատի և յեղափոխական գիւղացիութեան սոյժերը: Եւ որչափ ուշ է բանկւում յեղափոխութիւնը և հետեապէս՝ որչափ լաւ են կազմակերպւում այդ նոր սոյժերը, այնչափ վերջի վերջոյ աւելի ղեմօկրատական է լինում յեղաշջումը:

Այս բոլոր և ուրիշ առանձնայատկութիւնները, որ ունի և ուրիշ երկրների յեղափոխական պատմութիւնը, շատ զիւրին կհասկանայ և հաշի կառնի նա, ով կիրա-

ցնի պատմութեան մատերիալատական հասկացողութիւնը և կհամեմատէ Ֆրանսիական յեղափոխութիւնն առաջացնող ոյժերը ու նրա զարգացման պրոցեսը ուրիշ կրկնների կեանքի համապատասխան երևոյթների հետ:

Ֆրանսիական յեղափոխութեան ծանօթ լինելը կը ծառայէ հիմք՝ հասկանալու ուրիշ յեղափոխութիւնները իմաստը, նշանակութիւնը և ընթացքը:

Ս. Ռոժկով:

Պ Ա Տ Ա Ս Ռ Ն Ե Ր Ը

18-րդ դարի վերջին Ֆրանսիայի 25 միլիոն բն-դակչութիւնից 21 միլիոնը պարապում էր երկրագործութեամբ: Գիւղացին, լինէր ճորտ,\*<sup>1</sup>) թէ ազատ, գտնուում էր կալածատիրոջ կապանքներում: Մի կտոր հող ունենալու, այդ հողը մշակելու ու հնձից օգուտը համար նա պիտի կատարէր զանազան տեսակի պարտաւորութիւններ: Նախ և առաջ նա կալածատիրոջ վճարում էր կանոնաւոր հարկ, որ բուսական ըզգալի էր. քացի այդ, եթէ գիւղացին ցանկանում էր ալիւր արտադրել, հաց թխել, իւր պատրաստել, պիտի դիմէր կալածատիրոջ, որովհետև միայն վերջինս իրաւունք ունէր ջրաղաց պահել, փուռ և մինչև իսկ կաթնանոցներ ունենալ: Պարզ էր, որ կալածատէրը պահանջում էր իր ցանկացած վարձը: Երբեմն գիւղացին գալիս էր ջրաղաց, որը կամ չէր աշխատում, կամ դրադատ էր, այդ դէպքում նա ստիպւած էր լինում մի քանի օր սպասել: Առանձնապէս քայքայում էր գիւղական տնտեսութիւնն այսպէս կոչւած որսորդութեան իրաւունքը: Կալածատէրերը սովորութիւն ունէին գաղաններ պահել, գերացնել, առաւ արձակ թողնել այդ գաղաններին, նրանց վրայ որսի գնալու նըպատակով: Գաղանները փչացնում էին ցանքը, իսկ

\* ) Յեղափոխութեան նախօրեակին դեռ կար կէս միլիոն ճորտ:

երկրագործն իրաւունք չունէր սպանել իր արտը կամ քանջարանոցը մտած դազանին:

Որսորդութիւնը սիրում էին առանձնապէս թագաւորները: Երբեմն, հնձի ամենատար ժամանակ, երբ հնձի մի մասը դեռ հաւաքւած չէր լինում, հեծկազօր հարիւրակներ ու աւելի շատ հետեակ որսորդներ սըրանում էին դաշտերի վրայով ու ճանապարհին արտքում ամեն ինչ: Այդ որսորդների տւած վնասը էքսկայական չափեր էր բնդունում. ցանքերը ոչնչանում էին, դաշտերը մերկանում և յաճախ գիւղացին ստիպւած էր դադարեցնել իր աշխատանքը, այն էլ հնձի ծանր աշխատանքի ժամանակ\*): Գիւղական արտերը չափազանց տուժում էին նաև կալւածատէրերի աշունիներից: Փրանսիական գիւղացիները շատ սաւառ հող ունէին. Փրանսիայի հողերի երեք քառորդ մասը պատկանում էր աղնւականութեան և հոգևորականութեան: Երբ վերջապէս հասնում էր հնձի ժամանակը, գիւղացին սպառում էր պետական հարկերի հաւաքողին, որը կորզում էր յօգուտ պետութեան (և իրեն), որչափ կարող էր:\*\*) Համարեա ընդ որ միերընեբի վրայ, որոնց թւում և ազի, դււած էին ծանր հարկեր: Արտերից քաղածի տասերորդ մասը («տասորդը») վերցնում էր քանանան եկեղեցու համար Յաճախ հարկերն այնչափ մեծ էին, որ գիւղացուն ոչ չէր չէր մնում ստացւածից: Գիւղացին շատ վատ էր կերակրւում, միս և ցորենի հաց, թանկութեան պատ-

\*) Մ. Կովալեվսկի, «Ժամանակակից գետեկրատիայի ծագումը» հ. 1 110 երևա:

\*\*\*) Հօլային հարկն, որ բնկնում էր գլխաւորապէս մասն երկրագործների վրայ, պետութեան տարեկան աւելի էր 110 միլիոն ֆրանկ:

ճառով, չէր ուտում. հացի փոխարէն նա բաւականանում էր կորնկի և եղիպտացորենի խաւնուրդով: Գիւղացիների կանայք և աղջիկները ոտաբորբիկ էին, աները շատ վատ և յաճախ պատուեաններն առանց աղակիների: Յեղափոխութիւնից քիչ առաջ, երբ հողը շատ սակաւ արդեւնք էր տուրն գիւղացուն, վերջինս սկսել էր պարապել տնայնագործական աշխատանքով. այն ժամանակ առանձնապէս տարածւած էր գանակների, հաշիայի և յախճապակուց պարաստած առարկաների արտադրութիւնը: Միայն տնայնագործութիւնն էր, որ մի քիչ օգնում էր գիւղացուն. համարութիւնները թոյլ չէին տալիս գիւղացուն տարածել քաղաքներում իր տնայնագործական կերտւածքները: Երբ սկսեց դարգանալ մանուֆակտուրային արտադրութիւնը և նոյն առարկաները սկսեցին պատրաստել ու ծախուել աւելի արժան գնով, տնայնագործութիւնը ընդ որովին բնկաւ: Այդ դեռ քիչ է: Ո՞վ էր գլխաւորական ծառայութեան կանչւում. գիւղացին. ո՞վ պիտի տար բնակարան և պարէն գիւղով անցնող գնդին. գիւղացին. ո՞վ էր հարթում ճանապարհներ, քանդում ջրանցքներ և կամուրջներ կառուցանում. շարունակ նոյն գիւղացին:

Երբ գիւղացուն անտանելի էր կեանքն իր հողի վրայ, նա ձգում էր հողը և գնում քաղաք: Բայց այստեղ էլ նրան շատ դժւարութեամբ էր յաջողւում որ և է աշխատանք գտնել. նորից համքարական կաղմակերպութիւնները խանգարում էին. մնում էր միայն թափաւել, կամ ողորմութիւն մուրալ: Չնայեա՞ծ ֆրանսիական օրէնքները տաժանակիր աշխատանքով էին պատժում մուրացիականութիւնը, սակայն մուրացիկներ թիւը աճում էր և յնդափոխութիւնից առաջ տա-

րի առաջ նա հասնում էր մէկ միլիոն երկու հարիւր հազարի: Քաղաքներում և գլխաւորապէս Փարիզում մաւրացիկները լցում էին սանքիլոյտները շարքերը\*), (անվարտիքներ—ինչպէս անւանում էին արիստոկրատները յեղափոխական զանգաձներին) որոնք գրգռած էին թէ ազնւականութեան և թէ համբարութիւնների դէմ, մի խօսքով այն ամենի դէմ, ինչ որ նրանց զրկում էր աշխատանքից և հացից:

Բայց միայն գիւղացին չէր հողից բաժանուողը, հողը թողնում էր և կալւածատէրը: Այն ժամանակից երբ Տրանսիայում սկսեցին զարգանալ առևտուրն ու արդիւնաբերութիւնը, և ոսկէ գրամը շրջանառութեան մէջ մտաւ, գրաւելով իր փայլով ու հողի բարիքները գնելու հնարաւորութեամբ, կալւածատէրերը սկսեցին ձգտել մի բանի՝ ունենալ հնարաւոր շափով շատ փող, ոսկի:

Գաղտնավայրերը փոխում էին ալոտատեղիների, որովհետև գառան մորթու առևտուրն աւելի շահաւէտ էր դարձել: Բայց ազնւականները, որոնց ամբողջ շնորհքը անձնական խիզախութիւնն ու լաւ ապրելու կարողութիւնն էր, միայն դրամ էին ծախում, բայց այդ գրամը չէին աշխատում\*\*): ազնւականներն այդպիսով հողերը ծախում էին, կամ գրաւ դնում, իսկ ձեռք բերած փողը վայրկեանապէս ծախում:

Անդրիացի գիւմական Իւնդը, որ հենց յեղափոխութեան նախօրեակին ձանապարձորել էր Տրանսիայում, զրում է, որ որոշ ազնւական ընտանիքներ ապրում էին տարին 150 ուրլիով, այսինքն 13 ու:

\*) Սանքիլոտ—բառացի նշանակում է սասնց կարճ վաշտիքի, որ կրում էր միայն արիստոկրատիան:

\*\*\*) Կառլոսի «Գաղտնավայրի շահառութիւններ»

ամբօք ծախելով, գիւղացիներից ոչ լաւ: Արտունիքն ազգական կամ բարեկամ ունեցող ազնւականները զրնում էին մայրաքաղաք, որանդ սկսում էր նրանց համար ուրախ կեանք: Ոմանք դառնում էին արքայատան ծառայողներ և ստանում էին անագին ոսծիկ, միայն նրա համար, որ ներկայ էին լինում արքայի կամ թագուհու «վեր կենալուն», «նպզնելուն», «ընդունելութեան» և այլ ձևակախութիւններին. բացի սովորական ոսծիկից, նրանց արւում էին և նւէրներ: Ով ընդունակ էր աւելի շատ շահասիրելու միապետին, նա աւելի շատ դրամ էր ստանում: Հերցօգ Պօլինսալը մի անգամ ստացաւ 750 հազար ուրլի, որպէս նւէր: Որոշ ազնւականներ ձեռք էին բերում պետական բարձր պաշտօններ, կամ մտնում գիւմարական ծառայութեան՝ մեծ ոսծիկով:

Բայց ամենաարգիւնաւէտ պաշտօնն հայտնուցուսի, արքայիսիսկոպոսի կամ կարդիւնալի պաշտօնն էր: Ընդհանրապէս կարդիսկոպոսը համարեա իր հօտի մօտ չէր լինում. նա իր ամբողջ՝ ժամանակն անցնում էր Փարիզում: Նայելով նրա կեանքին, դժւար էր կարծել, թէ դա հողեր հօյր է: Թագան կարդիւնալը տարեկան ծախում էր մի միլիոն Ֆրանկ: Ընդհանրապէս այն ժամանակեայ հոգևորականութիւնը շատ հարուստ էր: Նրան էր պատկանում ամբողջ հողի համարեա մի հիւսկիսորդ մասը, որից նա ստանում էր տարեկան 4 միլլիարդ արդիւնք: Բացի այդ, ինչպէս ես ասացի, ամեն մի գիւղացի պարտաւոր էր տալ հողերականութեան հնձի և եղջիւրաւոր անասունների մի տասերորդ մասը, որն ամբողջ Տրանսիայում յօգուտ «եկեղեցու» տայիս էր 123 միլիոն: Իրան աւելացրէք և այն գումարները, որ ստաց-

ում էին եկեղեցական ծեսերի համար, ինչպէս օրինակ կնուծք, պասկ, թազում և այլն. դուք ինքներդ կարող էք դատել, թէ ինչպէս անողոք ձեռով հոգեւորականութիւնը շահագործում էր ժողովրդին:

ժողովրդից քամած փողերը բոլորովին էլ հաւասարաչափ չէին բաժանում եկեղեցական ծառայողների մէջ: Փողերը վերցնում էր բարձրաստիճան հոգեւորականութիւնը, իսկ ստորին դասը՝ այսինքն ծխային քանանաները փշրանքներն էին ստանում և շատ ազքատ ապրում: Չնայած քրիստոնէութիւնը բաճանաների մէջ հասասորութիւն և եզրայրական յարաբերութիւններ է քարոզում, այնուամենայնիւ եպիսկոպոսները բոլորովին եզրայրաբար չէին վերաբերում քանանաների հետ, որոնց ոչ մտակցում էին իրենց սեղանին և ոչ էլ ընդունում իրենց շքեղ ապարանքները:

Սազայն մւմ էին անցնում ազնւականների հողերը: Փերմիր-կապիտալիստներին, որոնք հեռացող ազնւականների հողը կամ կապալով էին վերցնում, կամ բոլորովին գնում: Այդ Փերմիրները գիւղատնտեսութեան ասպարիզում նոր մարդիկ էին. ինչպէս մեր գիւղական ցեղերը, նրանք առաջ էին գալիս գիւղական միջավայրում և դառնում բազբենիներ, բուրժուաներ:

Միջնագարում իւրաքանչիւր կալւած կարող էր անկախ ապրել. գիւղացիներն ազնւականներին ոչ միայն հաց և սնունդի մթերքներ էին մատակարարում, այլ և մնացած բոլոր անհրաժեշտ և ոչ անհրաժեշտ պիտանքները, գիւղացիների մէջ կային կոշկակարներ, գերձակներ, փականագործներ, մինչև իսկ նրաժիշակներ ու գերասաններ: Յետագայում, երբ ձորտութիւնն աստիճանաբար սկսում է վերանալ և գիւղացիներն ա-

ւելի ու աւելի են էքսպրոպրիացիայի ենթարկւում (այսինքն զրկւում իրենց հողերից), նրանցից շատերը քաղւում են գէպի քաղաքներ\*), ուր սկսում են պարագել արհեստներով, առևտրով և համքարութիւններ կազմել: Ես մի քիչ մանրամասնօրէն կանգ կառնեմ համքարութիւնների վրայ, որովհետև դրանք այն հասարակական բնիճներն են, որոնցից դուքս են եկել այժմեան արդիւնաբերական իմքակցութիւնները, և որոնք պարունակել են իրենց մէջ տիրական շահագործման և բանտրական դիմադրութեան սաղմերը: Այն ժամանակ, որ մենք նկարագրում ենք, համքարութիւնը պետութիւնից վաւերացած և հաստատւած միւնոյն արհեստի բանտրների՝ օրինակ կոշկակարների, գերձակների և այլն, միութիւնն էր: Համքարական կանոնադրութիւնը (PERJAMENT) շատ մանրամասն էր և վերաբերում էր ոչ միայն արհեստաւորների ու նրանց օգնականների յարաբերութիւններին, այլ և արտադրութեան տեխնիկային: Որոշ համքարութիւններ բաղկացած էին միայն անդամների որոշւած թւից, աւելին չէին ընդունում, իսկ համքարութիւններից դուքս արգելւած էր աշխատել: Փարիզում սակիբիշների քանակը 300-ից չպիտի անցնէր: Տուլուզ քաղաքը պիտի ունենար 200 սափրիչ և այլն: Արհեստանոցի տէրն իրաւունք ունէր պահել միւնոնների որոշ քանակ, այլապէս նա տուգանւում էր: Արհեստաւոր դառնալու համար, սկզբում կաւոր էր որոշ ժամանակ ասփորելը, յետո՛ւ

\*) Քաղաքները երկու են դիւաւաւապէս նախկին գիւղացիները. սկզբնական շրջանում քաղաքները աւելի հուսկի ման վայրեր էին:



կու տարի, կամ աւելի, նայած արճնատին, օգնական լինել և վերջապէս, բաւական դժար և թանկարժեք քննութիւն տալ: Յեղափոխութիւնից ոչ այնքան առաջ օգնականի համար համարեա անճարին էր արճնատուոր դասնալէ Համբարութիւններն աստիճանաբար աւելի ու աւելի են ստեմանափակում իրենց անդամների թիւը և այդպիսով ստեղծում նոր խոչընդոտների մի շարան արհեստաւորի կոչում ստանալու առաջ:

Ճշօղալական անտեսութեան ժամանակ, երբ պահանջները սահմանափակ էին, և աշխատանքի արեւսան աւելի էր դնուհատում, բան մթերքների արժանութիւնը, երբ ապրանքները սպաււում էին մօտակայ շուկայում ու արտադրում պատւէրով, համբարութիւնները միանգամայն բաւարարում էին տեղական շուկաների կարիքները: Իսկ երբ, Ամերիկայի գիւտից յետոյ, Յրանսիան աւետարական յարաբերութիւնների մէջ մտաւ միւս պետութիւնների հետ հնաւնապէս երբ պահանջներն սկսեցին աճել ու շուկաները լայնանալ, և երբ հարկաւոր էր ոչ թէ պատւէրով արտադրել, այլ սպառողների անորոշ թւի համար, համբարութիւնների հիմքը տատանւեց:

Կանոնադրութիւնները շղթայում էին իւրաքանչիւր լայն գործունէութիւն: Եթէ համբարական արհեստաւորներից ոմանք աւելի ընդունակ էին և կարող շատ ու արժան արտադրել, կանոնադրութիւնն արգելում էր այդպիսի մրցում: Ճիշտ է, համբարութիւնների կողքին և նրանցից դուրս կառավարութիւնը թող էր տալիս բացառիկ դէպքերում արդիւնաբերական ձեռնարկութիւններին աշխատել (չնայած բոլոր արգելքներին արդիւնաբերական կապիտալիզմը զարգանում էր):

Բայց նա միաժամանակ ենթարկում էր այդ ձեռնարկութիւններն այնպիսի մանրակրկիտ հսկողութեան, որ բնականօրէն, խանգարում էր լայն արտադրութեան «Ուժեղ արդիւնաբերութիւնը — դրում է Լեվասէրը»\*) — և կի է արքայական կառավարութեան ինստիտուցիան: Ճիշտ է, արքաները և մինիստրները հովանաւորում, օժանդակում էին արդիւնաբերութեան, բայց նրանք ենթարկում էին այդ արդիւնաբերութիւնը բազմաթիւ կանոնադրութիւնների, որոնք չնայած բղխում էին աշխատանքը կատարելագործելու ցանկութիւնից, բայց յաճախ խանգարում էին նրա զարգացման և արտադրութիւնը կասեցնում աննպատակ բանմոլութեամբ:

Ճշօղալական կառավարութիւնը մտնում էր հասարակական կեանքի բոլոր ծակոտիւնները և ամեն բանի վրայ դնում իր ծանրակշիռ կնիքը: Այն ժամանակ, երբ «նախկին ճորտերի» մի մասը զբաղւում էր արհեստներով, արդիւնաբերութեամբ, մի ուրիշ մասը իրեն նւիրել էր առևտրին, վաշխատութեան: Դեռ յեղափոխութիւնից շատ առաջ բուրժուադիան ձեռք էր բերել մեծ ֆինանսական ոյժ: Մտանկացող ազնւականութիւնը, արքան, որոնց ծախսերը օրէցօր աճում էին, փողի մեծ կարիք էին դրում և յաճախ դիմում բուրժուադիային: Թագաւորի արքունիքում գտնուող հինգ բանկիր ունէին 200 միլիոն: Բացի այդ այն ժամանակեայ Յրանսիայում պետութիւնն ինքը չէր հարկեր հաւաքողը: Նա հարկահաւաքի իրաւունքը ծախում էր որևէ հարուստի, տալիս էր կապալալով: Հասկանալի է, որ մասնաւոր անձնաւորութիւնը հաւաքում էր այնչափ հարկ, որչափ կարող էր և ցանկանում էր:

\*) Levasseur. «Histoire des classes ouvrières».

Հասկանալի է, որ ժողովուրդը քիչ չէր տառապում այդ բանից:

Իրերի այդպիսի գրութիւնը թագաւորին ձեռնառէր, որովհետեւ նա կապալառուից ոտանում էր փող: Բարբոսովին չնոգալով այն մասին, թէ իր հպատակները հարող են վճարել պահանջւելիք հարկերը, որ հետզհետէ աւելի ու աւելի ծանր էին դառնում: Ետքումս փողի կարիք զգալով, թագաւորը ծախում էր գանձաւոր պաշտօններ, ինչպէս դատարանային, ֆինանսային, ոստիկանական մինչև իսկ ձայնաւորների տեղերը: Այդպիսով բուրժուազիան սակաւ առ սակաւ մանում էր բարձրաստիճան շրջանները, երբեմն ուղղակի պաշտօններ գնելով, երբեմն էլ նախօրօք աղքատական կոչման հասնելով:

Իսկ ազնւականութիւնը, որ վարուց էր կորցրել իր անտեսական ոյժը, դեռ կանգնած էր կտաւափարութեան գլուխ և ուզում էր իր կամքը թելադրել բուրժուազիային: Արքան, որ առաջին ազնւականն էր պաշտպանում էր ազնւականութեան շահերը, որչափ կարող էր:

Բուրժուազիան միայն գրամով չէր բաւականանում նրան հարկաւոր էր այդ գրամը շրջանառութեան մէջ դնել և իրեն շահը ապահովել, իսկ գրաւ համար նրան անհրաժեշտ էին բազաբական իրաւունքներ, որից նա զուրկ էր:

Ամբողջ իշխանութիւնը կենտրոնացած էր թագաւորի ձեռքին, որն անում էր այն, ինչ ցանկանում էր առանց հսկողութեան, Չնարցնելով անմիջականօրէն շահագրգռած դասերի կարծիքը, թագաւորական նախարարները օտար երկրների հետ առևտրական գաշեր էին կնքում, որոնք յաճախ ուղղակի վնաս

էին հասցնում ազգային արդիւնաբերութեան: Երբ արդիւնաբերողները, իմանալով կնքած գաշնադրութիւնների մասին, բողոքով դիմում էին «սեփաւորներին», նրանց պատասխանում էին՝ «արդէն ուշ է, դաշինքը ստորագրւած է»: Բացի այդ, սեփականութիւնը, բուրժուազիայի այդ սրբազան սրբոցը, աղանոված չէր, ոչ միայն բարձր, այլ և ստորին իշխանութեան կամայականութիւնից: Մի դատարկ բանի պոչից կոչւում էին, և կապիտալիստը զրկւում էր իր ունեցածքից, սեփականութիւնից: Անհատը նոյնպէս քիչ էր ազատ ու անձեռնմխելի, որպէս սեփականութիւնը: Արքան ամեն մարդու կարող էր զրկել կենցեցից և ազատութիւնից, սրի համար նա ունէր այսպէս կոչւած լինարդ կայէ (տղած թղթեր): Իրանք թագաւորի ստորագրած և կնքած, միանգամայն պատրաստի վճիռներն էին, որոնց մէջ բաւական էր գրել ցանկացած անունը, և դժբախտը, մեղաւոր, թէ անմեղ, ընկնում էր բանտ, աքսորւում տաճանակիւր աշխատանքի, կամ գլխատւում, թագաւորն առատօրէն բաժանում էր այդ լինարդ-կայէներն իրեն սիրելիներին: Թագաւորի սիրելիները, որոնց թիւը մշտապէս բաւականաչափ էր, ունէին այդպիսի թղթեր, (եթէ մէկի վրայ բարեկանային, նրա անունը մտցնում էին թուղթ և կարելի է հաւատացած լինել, որ 24 ժամից յետոյ ոճիրը կիրազորւի):

Ազատութիւն չկար: Թագաւորի իշխանութիւնն արաւոյրա էր, անասմանափակ: Աշխատիք, վճարիք թագաւորին՝ ապրելու և կերակրելու իրաւունքի համար ու լսիր:

Բուրժուազիան, որի վրայ ընկնում էր հարկերի զգալի մասը, չգիտէր, պետական գանձարանում փող

կայ արդեօք և որքան, ինչպիսի ծախսեր ունի պետութիւնը և ինչի վրայ են ծախսուած ժողովրդի գումարները և այլն: Բարձրագիւն (արդիւնարներական, աւետարական և ֆինանսական) ուզում էր ամեն ինչ գնել լայն հողի վրայ, լայց նրան խանգարում էին և համըարութիւնները, որ դէմ էին խոշոր արտադրութեան, և ազնւականների, արտառութիւնները, որ զրկում էին նրան պետութիւնը կառավարելու ամեն մի մասնակցութիւնից: Բուրժուազիան կարիք ունէր ազատութեան, որովհետե նա ունէր տնտեսական ոյժ, նա ուզում էր գնել և վաճառել, ոչ որք չհարցնելով, շահել, չըողալով ամեն բոպէ իր սեփականութեան համար: Նրան հարկաւոր էր հաւասարութիւն, որովհետե նա չէր ուզում ծաղումի և ոչ մի արտառութիւն, որովհետե նա ցանկանում էր, որ ամեն ինչ հաւասար լինի փողի առաջ, որպէսզի ամեն բան կարելի լինի փողի հետ փոխանակել: Նրան անհրաժեշտ էր եղբայրութիւն, որովհետե նրանից զըջւում էին և նրան արհամարհում: Իսկ ինչպէս լցւել էր հարուստ, լուսաւորւած բուրժուազիայի համըրութեան բաժակը, չէ ո՞ր նա կախւած էր մի որ և է թագով պոսակւած ապուշի, յիմարի, կամ պոռնիկի կամայականութիւնից:

Իսկ ժողովուրդը, այսինքն ոչ ազնւականութիւնը, հողեորականութիւնը և ոչ էլ բուրժուազիան, այլ հասարակ բանւորները, օրավարձները, ծառաները և մնացածները: Մի խօսքովայն սանքիւլուտները, այն ամասան», որ իր ուսերի վրայ տարաւ յեղափոխութիւնը, որն արիւն էր թափում և միադետականների, և, օտարերկրեայ գնդակների տաքափի տակ հայրենի թշնամիների դէմ մղած կռում: Ինչ էին

մտածում այդ սանքիւլուտները, ինչ էին ուղղւմ և ինչի էին ձգտում: Յանուն ինչ բանի էին նրանք կռւում:

Նրանց թիւը քիչ չէր յեղափոխութեան ժամանակ: Արդիւնաբերութեան մէջ զբաղւած էին երեք միլիոն աշխատաւոր ձեռքի: Փարիզում միայն հաշւում էին 150,000 օրավարձու, իսկ ամբողջ Յրանսիայում 4 միլիոն: Գիւղատնտեսական բանւորների թիւը սատանում էր մէկ ու կէս և երկու միլիոնի մէջ. վերջապէս, բաւական բազմաթիւ էին և տնային ծառաները, շորոնցով սիրում էին պնտաւորելը արքունի ծառայողները և ֆինանսականները:

Այն ժամանակից, երբ ամեն տեսակի համըրային ճնշումները վերջնականապէս զրկում էին արհատաւորների օգնականներին արհատաւոր գտնելու ճնարաւորութիւնից, այսինքն մտանագէտ դատնալուց, սկսեց զարդանալ և աճել պրոլետարների մշակական բանակը: Հնաւորց նախապետական յարաբերութիւնները, որ գոյութիւն ունէին արհատաւորների և նըրանց օգնականների մէջ, փոխեցին բանւորական աշխատանքի անսանձ շահագործման:

Համըարութիւնները, որոնց սպանում էր բնական քայքայում երկրում հիմնւող մանուֆակտուրների մրցման և նոր շուկաների պահանջները բաւարարելու ապրիկարութեան շնորհիւ, կարող էին իրենց գոյութիւնը պահպանել բանւորների աւելի ուժգին շահագործութեամբ: Տիրոջ և բանւորի մէջ աստիճանաբար խորանում է այն անգոռնը, որ վերջնականապէս հաստատում է Յրանսիական յեղափոխութիւնը, ոչնչացնելով համըարութիւնները և զարկ տալով խոշոր արդիւնաբերութեան արագ ծաղկման:

Բանտարական օրը երկարում էր, ոտճիկը նւագումս Իրութիւնը ծանր էր: Վտակալի է խոստովանել— դրում է Մարկէնը—միլիոնաւոր Փրանսիացիներ պահում են աւելի ծանր պայմանների մէջ, քան նրանք, որոնք օքստրւած են զալերային տաժանակիր աշխատանքի, այնտեղ գոնէ կեանքն ապահովւած է: Փարիզի շրջարդ մասը—գրում է Միրսինն—դեռ 1785 թ., հաւատացած չէր, թէ աշխատանքը հնարաւորութիւն կայ գոյութիւն ունենալ մօտակայ օրերի ընթացքում\*): Աշխատանք դժուար էր ճարել:

Արդէն XVI-րդ դարից բանտրները միանում էին և կազմում «ընկերութիւններ», որոնց նպատակն էր իրենց կարիք ունեցող անգամներին օգնութիւն ցոյց տալ: Եթէ մէկը զրկւում էր աշխատանքից և ճանապարհուում ուրիշ քաղաք, աշխատանք փնտրելու, «ընկերութիւնները» նրան ճանապարհածախս էին ստալիս և օգնում բանտրի անդորձութեան ժամանակ: Կառավարութիւնը հետապնդում էր բանտարական միութիւնները: Ֆրանցիսկ I թագաւորն արգելեց տնաչէններին և քարաշէններին հաւաքոյթներ ու ժողովներ սարքելու: Բանտարական գործադուլները նոյնպէս արգելւում էին: 1744 թ. Լիօն քաղաքում բանտրները գործադուլ արին և պահանջեցին աշխատավարձի աւելացում: Որովհետև գործադուլաւորները շատ էին և կուռ, քաղաքային իշխանութիւնը խոստացաբաւարարել նրանց պահանջը: Բայց հենց որ բանտրները սկսեցին աշխատել, Լիօն զօրքերու ուզարկեցին «խոտովարարները» ձերբակալեցին, սոմաք մահան պատժի ենթարկեցին, ոմանք էլ տաժանակից աշ-

խատանքի: 1748 թ. Փարիզի բանտրները գործադուլ չալարարեցին և սկսեցին պարագել արկերուզների (զինտրական զէնքի) պատրաստումով. գործադուլաւորները ցանկալում էին հարկադրել տէքերին օրափարձը փոխել հատավարձի: Ընդհարման քննութիւնը յանձնել էր «ոստիկանութեան լէյտենանտին», որը դէմ գնաց բանտրներին, յալարարելով, թէ հատափարձային աշխատանքի ժամանակ բանտրները, զբաղւած լինելով բացառապէս աւելի շատ աշխատավարձ ձեռք բերելու մտքով, զանց են առնում ապրանքների սրակը: Բասաիլիան վերջնաւուց մի քանի ամիս առաջ Փարիզում բամբակի գործարանում գործադուլ պոսթիկեց. գործարանատէրն սպանում էր աշխատավարձն իջեցնել օրական 75 սանտիմի: Սենտ Անտուան արարձանի սմբող ընտկութիւնը օգնութեան հասաւ գործադուլաւոր բանտրներին, և գործարանից մնացին միայն ծխացող փլատակներ:

Այսպէս հասարակութեան բարձր և ստորին խաւերում ետում էր անբաւականութիւնը: Չնայած տարբեր հասարակական խմբակցութիւնների շահերը ընդհարում էին և հակամարտութեան մէջ ընկնում, բոլոր ձնչւած, հպատակուող և անիրաւունք տարբերը միտնում էին մի բանում՝ ազատութեան և հաւասարութեան պահանջում:

Տնտեսական յարաբերութիւնների և քաղաքական ձնչւածն հողի վրայ աճած այդ պահանջները կտրում էին իրենց ֆոնդամենտներից, ընդունելով իդէալիստական կաղապար և ամենուրեք տարածելով, ոգևորում բանաստեղծներին, սնունդ տալիս փիլիսոփաներին և զբաւում երազող ու ծարաւի զանգաւանները: Ժան-ժակ Դեյուսօն ապացուցում է, որ բոլոր մարդիկ հաւասար

\*) Տես Կովալեւսկի, op. cit.

են, որ մի մարդու իշխելը միւսների վրայ ճշմարտութեան հակառակ է, և որ արտօնեալ փոքրամասնութեան ամբողջ ժողովրդի վրայ տարածող բռնի տիրապետութիւնը պիտի տեղի տայ պետութեան անդամների ազատ համաձայնութեան: Ռուսօր «Հասարակական համաձայնութիւն» շարագրութիւնը դարձաւ յեղափոխականների աւետարան: Վօլթերը կուռւմ է յանուն լոյսի, ճշմարտութեան և ազատ մտածողութեան. նա խարազանում է կրօնական նախապաշարունակները, բողոքում շարագործների և ամեն տեսակի քաղաքական ճնշման դէմ: Կառավարութիւնը յաճախ այրում էր Վօլթերի աշխատութիւնները, որոնք ուժեղ տպաւորութիւն էին գործում ոչ միայն Ֆրանսիայում, այլ և Ֆրանսիայի սահմաններից դուրս, բայց Վօլթերն ասում էր՝ այլեւ—չի նշանակում պատասխանել: Միւսոյն ժամանակ մի շարք փիլիսոփաներ խիստ գիտական քննադատութեան են ենթարկում հաստատւած կրօնական-քաղաքական և փիլիսոփայական հայեացքները, առանութեբրորդ դարի վերջին սկսեց հրատարակելէն Էնցիկլոպեդիկ բառարան, որին մասնակցում էին ամենայայտնի և առաջաւոր գիտնականներ. Հելվեցին և Նյութսթրեյտը հերքում են հողու անմահութիւնը և հասնում օթիկովին ու բնագաւառութեան մէջ մտցնում մտորիալիստական ըմբռնում: Դիդրօն հեզնօրէն հարցնում է՝ «Ի՞նչ ասուած է այն, որ ստիպեց սպանել աստուծոն, ասուածը ճանաչելու համար»: Մօնթեսքիօն նկարագրում է քաղաքականօրէն ազատ պետութեան պատկերը: Ամբողջ անցեալը, դարերով հաստատւած հասկացողութիւնները, բարբերն ու կարգերը ենթարկում են վերաքննութեան, քննադատութեան:

### ՀԻՆ ԿԱՐԳԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ

Մի կողմից ծաղկող արդիւնաբերութիւն, առեւտուր, որ կենդանանում էր միջազգային յարաբերութիւնների և ծովային երթնեկութեան լայնանալու հետ միասին, արտադրութեան նոր միջոցներ, որով մեխանիկան հարստացնում էր մանուֆակտուրը, միւս կողմից արտադրութեան դէմ խոչընդոտներ, արտօնութիւններ, դիւտերին խանգարող նախանձ. մի կողմից բնութեան գաղտնիքները թափանցել և բարոյականութեան օրէնքները որոշել փորձող մաքի ուժգին աշխատանք, միւս կողմից զրելու որեւէ ազատութեան բացակայութիւն. թաղաւորի առանձին կարգադրութեամբ թոյլատրւած և ցենզուրայից ստուգւած գրքերի տպագրութիւն, յանդուգն թէօրիաներ քարոզող գրքեր, նեղ վարչական բուտինայի կողքին—այսպէս էին 18-րդ դարի հակասութիւնները: Օրէնքները չէին համապատասխանում բարբերին և պահանջներին:\*) Այդպիսի հասարակակազմն երկար գոյութիւն ունենալ չէր կարող: Յեղաշրջումն անխուսափելի էր, և նա իրեն երկար սպասեցնել չաւեց: Պետական գանձարանը համարեա զատարկ էր: Հարկերն աճուած էին, իսկ փողն անյայտանում թաղաւորի անյատակ գրպաններում: Ազնւականութիւնը և հողերականութիւնը հրաժարուում էին դրամ տալ: Ազնւականութիւնն ասում էր՝ «Հին սովորութիւնների համաձայն հողերականներն ազօթքներ են առաքում Աստուծոյն աշխատանքները յանուն հայրենիքի արքային», Երբորդ «Երկրորդ 7/11-1922» դասը փող է մտակալում»:

\*) Levasseur, op.



տակ հասկացում էր մնացած ազգաբնակիցիները: Բուրժուազիան, որ բոլոր իրաւունքներէն զուրկ էր, նոյնպէս հրաժարում էր զբաւ վճարելու երբ Ֆինանսների մինիստր նշանակեց յայտնի գիտնական և լիբերալ Տիւրզոն, նա առաջարկեց թագաւորին նախ և առաջ ոչնչացնել համքարութիւնները, որովհետեւ նրանք արդիւնաբերութեան և աւետրի զարգացման մեծ խոչընդոտ էին: Թագաւորը համաձայնեց, բայց մի բանի տարուց յետոյ նորից վերահանգնեց համքարութիւնները: Տիւրզոն հրաժարական տուց: Նրանից յետոյ նշանակուեալ են նոր նախարարներ, բայց նրանք ոչնչով չեն կարողանում կանոնաւորել Ֆինանսները: Եթէ նրանք կամենում էին բուրժուազիային որ և է գիջումներ անել, նրանից փող ստանալու գիտաւորութեամբ, թագաւորը և արքունի ծառայողները՝ ծառայում էին ամեն տեսակի լաւբիոխուսներին դէմ: Եթէ նախարարները յոյսները գնում էին իրենց սյօթերի վրայ, փոխառութիւններ էին կնքում և բաց թողնում շատ թղթադրամ, երկու կամ երեք տարի անց անանկացում էր առաջ գալիս, որովհետեւ ժողովրդի ականջին հասնում էին գանձարանի ազբատութեան լուրերը, և նա չէր ուղում թղթադրամներ վերցնելու գիտնալով, որ նրանց փոխարէն ոսկի չեն առաջ:

Նույնը և մանր կուլաժատէրերն արդէն թագաւորին պարտք էին տուել 4 և կէս միլիարդ և տեսնում էին, որ դիֆիցիտը մեծանում է, և պետութիւնը ոչնչով չի կարող վճարել թէկուզ 2 միլիարդ պարտք: Դրութիւնը թուում էր անկրակելի: Երկիրը յուզում էր: Կառավարութեան շփոթութիւնը ընդունում էր այնպիսի չափեր, որոնք աւելի էին զրգուում ժողովրդին:

Քայի այդ 1788 թ. կարկուտ տեղաց և բուլբուլին Ջորջեց ցանքը: Սովը վրայ հասաւ, օգնութիւն չկար, բուսահատութիւնը տիրել էր բոլորին: Զորքը, որին ամբողջ ամիսներով սոճիկ չէին տալիս, սկսել էր տրտնջալ: Ամենուրեք ընդհանուր ժողովի այսինքն բոլոր գասերի ներկայացուցիչների հրաւիրման պահանջով ձայներ էին լսում: Ֆինանսների նախարար Ենկկերը, որ լիբերալ հայեացքների տէր էր, մատնանշում էր թագաւորին այդպիսի ելքի անխուսափելիութիւնները: Լիւդովիկ 16-երորդը չէր ցանկանում ընդհանուր ժողով հրաւիրել: Ի՞նչպէս կարելի էր թագաւորին դիմել ժողովրդի խորհրդին: Չէին ցանկանում և արքունի պաշտօնեաները, որովհետեւ նրանք նախատեսում էին եկող վտանգը և վախենում, որ իրենց արտադրութիւնը կվերջանայ: Բայց անելու բան չէր մնում, այնուամենայնիւ փող ձարելու տեղ չկար: Թագաւորը համաձայնեց ու յայտարարեց, որ Ֆրանսիական ժողովուրդը բոլոր գիւղերից ու բազաքներից ուղարկէ իր ներկայացուցիչներին (քեզուատներին) Փարիզ, արտայայտելու իրենց ցանկութիւնը, գաղտագողի թագաւորը մտածում էր, որ ընդհանուր ժողովը կհասաքէի, կիտտի գրամ ձարելու մասին և կըջրէի: Սակայն ժողովուրդն այլ վերաբերմունք ցոյց տուց: Նրա գարեբով կուտակած գօղունութիւնը դուրս պտտիկեց, շատ էր նա սարկութեան և խուարի մէջ ապրելու: Ընտրելով ներկայացուցիչներին, ընտրողները պարտաւորեցնում էին նրանց չբուսահանանալ վերանքներով և խոստումներով, այլ պահանջելու բարենորոգութիւններ: Իւրաքանչիւր բազաքացի ընդհանուր ժողովի մէջ տեսնում էր ժողովրդի միութիւնը, մի միութիւն, որը միայն կարող էր ոյժ գառնալ՝ Այնտեղ, մայրաքաղաքում պիտի հանդիպէին ամենա-

հեռուօր դիւղերի, և քաղաքների ներկայացուցիչները նրանք այնանոց միասին պիտի որոնասական զրույթիւնից ելք գտնէին. վերջ դնելու թագաւորական կամայականութեան և ժողովրդական իրաւագրկութեան Բաղաքները, մասնաւոր ընկերութիւնները, դասերը, միութիւնները նկարագրում էին այսպէս կոչւած կայէտներում (տեսարակներում) իրենց կարիքները: Գիւղացիները պահանջում էին այդ տեսարակներում «տասնորդի» և ֆէօդալական իրաւունքների վերացում. հարկերի պակասեցում: Բուրժուազիան հարկերի հարցում պահանջում էր ազնւական և հողգորականութեան արտօնութիւնների ոչնչացում, ժողովրդական խիստ հակոզութիւն պետական ծախսերի և մուտքի վրայ ու իրերնայ սահմանազրութեան հաստատում: Նշանակալից էր այն հանգամանքը, որ «կայէտների» մէջ արդէն պատահում էին «չորբորդ» դասի (այսպէս էին սկսել իրենց անւանել բանւորները, մի տեսակ իրենց շահերը արդէն հանելով երբորդ գասի շահերի ընդհանուր պումարից) տեսարակները:

Տեսարակներից մէկում բանւորները պրում են «ի՛նչու 150000 մարդիկ, որոնք օգտաւէտ են իրենց համաքաղաքացիներին, չեն գտնում իրենց ոյժերի կիրառումն: Ի՛նչու են մեզ՝ աղքատ արհեստաւորներին մտանում, չէ՛ որ առանց մեզ մեր եղբայրները կղզային կարիքներ, որոնք բաւարարում են այժմ մեր անդադրում աշխատանքով»: «Աղքատների» տեսարակում բանւորները արտայայտում են աւելի ուժեղ, նրանք սկսում են դիտակցել մտակող յիզափոխութեան բուրժուական բնաւորութիւնը: Նրանք պահանջում են՝

1. Բոճիկ նշանակելիս չզեկավարել անասնձ շը՞

քեզութեան և անյաղ ազանութեան սպանիչ սկզբունքներով:

2. Աշխատող և օգտաւէտ մարդուն օգնելը դարձնել սահմանադրութեան ոչ նազ սրբազան առարկայ, քանի հարուստի սեփականութիւնը:

3. Իւրաքանչիւր աշխատող և օգտաւէտ մարդու ապահովել կայսրութեան ամբողջ տարածութեան վերայ:

Ոմանք դրում են՝ «ինչ ծառայութիւն կանի կըմախքացած, սահմարձակ ժողովրդին անկեղաւ սահմանազրութիւնը: Եւտափութ պիտի արհեստանոցներ բանալ, բանւորների ոսոխիկի աստիճանը սրտել, ստիպել հարուստներին զործադրել ըմնորական ոյժը... Պիտի ապահովել ժողովրդին մօտալուս 20 միլիոնի անսեփականատէրերի սոսկալի ազատութիւնից»... Ինչպէս մենք տեսնում ենք բանւորների պահանջներն այն ժամանակ զիւս բոււականաչափ համեստ էին. բանւորները գիւսաւորապէս պահանջում էին աշխատանքի իրաւունք:

Սակայն նրանց ձայները կտրչում էին ընտրողական ժողովների ազմուկի, մէջ որտեղ գասերը ընտրում էին իրենց ներկայացուցիչներին:

Ընտրութիւնները կաւարում էին շատ խայտաբղէտ և բարդ ձեով\*): Մի քանի դասեր, ինչպէս օրինակ բարձրաստիճան ազնւականութիւնը և հողգորականութիւնը, ուղղակի ընտրում էին իրենց պատերազաններին. ուրիշները, օրինակ մանր ազնւականները

\*) Ընտրութիւնների ձեով մեջ— գրում է Լուի Բլանը, ինչպէս շեօակ հայելում անդրդարձել է էին Ֆրանսիայի ամբողջ քաղաքը:

և ծխային քանանները, սկզբում ընտրում էին ընտրողներին. կրթորդ դասի՝ բուրժուազիայի համար ընտրութիւնները, նայած շրջաններին երկաստիճան, եաստիճան և նոյնիսկ քառաստիճան էին:

Ընտրողական իրաւունք ունէր 25 տարեկան իւրաքանչիւր Փրանսիացի, որ վճարում էր որևէ հարկ: Բանտրները և գլխաւորապէս Փարիզի բանտրները մեծ մասամբ զրկւած էին ընտրական իրաւունքից: Առաջին երկու դասը կարող էին պատւիրակներ ընտրել միայն իրենց միջից. բուրժուազիան իրաւունք ունէր ներկայացուցիչներ ընտրել և ուրիշ դասերից: Ազնւականութիւնը ընտրեց 242 արքունի և կալուածատէր ու 28 պաշտօնեայ ազնւական, հոգևորականութիւնը 48 արքեպիսկոպոսի և եպիսկոպոսի, 35 վանաօր և 208 կիւրէի, կրթորդ դասը՝ 2 հոգևոր անձ, 12 ազնւական, 100 քաղաքական պաշտօնեայ, 212 փաստաբան, 16 լիբերալ և 216 վաճառական ու գիւղական տնտեսատէրեր:

1789 թ. մայիսի 5-ին Վերսալում բացւեց Ընդհանուր Ժողովը: Հաւաքել էր 1200 մարդ, որոնցից 300 ուղարկւած էին հոգևորականութեան կողմից՝ 300-ը՝ ազնւականութեան և 600-ը՝ կրթորդ դասի: Որովհետև Երբորդ դասի պատւիրակները երկու անգամ աւելի շատ էին, քան միւս դասերի, առանձին վերցրած, ազնւականութիւնը և հոգևորականութիւնը պահանջում էին դասերի առանձին քեւարկութիւն: Այդ կնշանակէր, որ իւրաքանչիւր դաս առանձին քննուէր հարցերը ու յետոյ Ընդհանուր Ժողովում մի քանակա՛ն այս կամ ոչ: Ընդամենը, ուրիշմ 3 դասից ձայն, և որովհետև ազնւականութիւնն ու հոգևորական

նութիւնը համարեա միշտ միացած են գործում, հետեապէս երբորդ դասը կազմելու էր փոքրամասնութիւն և չէր ունենալու ոչ մի նշանակութիւն.

Այդ պատճառով էլ կրթորդ դասի պատգամաւորները պահանջում էին քեւարկութիւն ըստ ներկայացուցիչների: Ազնւականութիւնը և հոգևորականութիւնը չէին համաձայնում ու առանձին էին խորհրդակցում, իսկ այդ բանը ժողովրդի մէջ յուզմունք էր առաջ բերում. ժողովուրդը հասկացաւ, որ նրա հետեապէս կատակորդութիւնն են խաղում և դիմել են իրեն միմիայն փողի համար:

Ամեն կողմից խրախուսում էին կրթորդ դասի ներկայացուցիչներին: Վեց շաբաթեայ ընթացքում Ընդհանուր Ժողովը զբաղւած էր վիճարկանութիւններով այն մասին, թէ ինչպէս քեւարկել ըստ դասի, թէ ըստ առանձին պատւիրակների: Բուրժուազիան յամառում և պնդում էր իր առաջարկի վրայ: Թագաւորը դժգոհում էր և սրտչեց կարուկ միջոցների դիմել:

Ժողովը բացումից մի քանի օր յետոյ Թագաւորի նախագահութեամբ կայացաւ բոլոր դասերի հանդիսուոր նիստը: Թագաւորը յայտարարեց, որ քեւարկութիւնը լինելու է ըստ դասի, և եթէ դասերը չլինեն որ և է համաձայնութեան, ինքը Ժողովրդին կապ բարեկէցութիւն: Իր ճառը վերջացնելով, նա առաջարկեց բոլորին ցրելու հոգևորականութիւնը և ազնւականութիւնը կաւարկեցին առաջարկը, իսկ կրթորդ դասը մնաց իր անդում: Նրա շարքերում տիրում էր լուսութիւն և շփոթութիւն: Թագաւորի ավտօրիտետը գետնա շատ ուժեղ էր, սրբէս դի կարելի լինէր նրան չլսել, միւս կողմից տմբուջ Ժողովը և հայտացքն՝ ուղղւած



ներկայացուցիչներին և աւած երգումը օտիպում էին նրանց մնալ իրենց տեղերը: Գրաֆ Միրաբոն ընդունեց նետած ձեռնոցը, նրա շանթող ճառը յեղափոխութեան դողանշէր: Երբ դանիճուում երևաց մի սպայ և յիշեցրեց երրորդ դասի ներկայացուցիչներին թագաւորի հրամանի մասին, Միրաբոն բացականչեց՝ «Մենք այստեղ ենք եկել ժողովուրդի կամքով և կենտանանք միայն սիննիբի ոյժից զրդւած»: Իրօշակը բարձրացւած է: Թագաւորի կամքին հակադրեց ժողովուրդի կամքը և զբանով էլ սկսեց յեղափոխութիւնը\*):

Յեղափոխութեան առաջին տարին Միրաբոն մեծ և աչքի դարձող դեր էր խաղում:

Յաճախ վտանգաւոր դարաշրջաններում, երբ իշխանութիւնը մի դասակարգից անցնում է միւսին, իշխող, բայց արդէն մեռնող դասակարգի անդամների քիչ տոկոսը չի անցնում ձեռնած դասակարգի՝ կողմը: Ինչպէս այժմ դանագան պրօֆեսսորներ, իրաւաբաններ, բժիշկներ, ճարտարապետներ, որոնք ծուել են բուրժուազիայի շրջանում, դառնում են պրոլետարիատի իրաւունքների մարտիկներ, այնպէս էլ Փրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ բաւականաչափ ազնւականներ և հողերականներ անցան երրորդ դասի կողմը: Բացի Միրաբոնց մասնանշենը և Օրլեան դուքսին և վանահայր Միէյսին, որն ասում էր՝ «Ի՞նչ է այժմ երրորդ դասը, ոչինչ, ի՞նչ պիտի նա լինի, ամեն ինչ»:

Երբ յունիսի 20-ին երրորդ դասի պատգամաւոր-

\*) Տեսազայում Թագաւորը կաշտեց Միրաբոն, որը գտնանուեց 1791 թ.

ները ըստ սովորութեան ուղևորեցին գէպի գահլին. ուր նրանք ժողովի էին հաւաքւած, նրանք թագաւորի կամքով փակեցին դահլիճում: Վերաւորւած պատգամաւորները, սակայն, չցրեցին իրենց տները: Մահմաճադրութեան ջերմ կողմնակից և յայտնի աստղաբաշի նախագահ Բալիի առաջարկութեամբ նրանք որոշեցին ժողովների համար այլ տեղ փնտրել. ժողովուրդը տեսաւ, թէ ինչպէս 600 պատգամաւոր թափառում էին Վերսալի փողոցներում, սղթա տեղ փնտրելով: Տեղը գտնւած է: Նա մի տրճակ և դատարկ բակ էր: շրջապատւած չորս պատով, առանց սեղանների և նստարանների: Այստեղ պատգամաւորներն երգեցին չցրել մինչ այն ժամանակ, երբ ժողովուրդը ստանայ սահմանադրութիւն: Հենց այնտեղ էլ նրանք էնդհանուր ժողովը վերանւանեցին Ազգային ժողով. ցանկապաւոր շրջապատող ամբիսը ծափահարում էր:

Այդ ժողովից յետոյ, երբ երրորդ դասը ցոյց տուեց, որ նա մտադիր է ինչ էլ որ լինի ժողովուրդի կամքը ի կատար ածել, հողերականութիւնն ու ազնւականութիւնը սկսեցին հետզհետէ զալ բուրժուազիայի ժողովներից, և Ազգային ժողովը կարող էր որդէն աշխատանքի ձեռնարկել:

Իտալիի հաշտութիւնը թագաւորի համար ուժեղ հարւած էր: Լիւրովիի XVI-դն, որպէս բնաւորութիւնից դուրի անձնաւորութիւն, ընդունակ էր ամեն բանի և լատի և վատի, բայց նա հետաքրքրւում էր միայն որտով: Թագաւորը պատրաստ էր ամեն զիջում անել. միայն թէ չիտանգարէին նրա որսորդութեան: Բոլորովին հակառակ բնաւորութիւն ունէր թագուհի Մարիա-Անտուանէտը, աւստրիական թագուհի Մարիա-Թերե-

զայի ազնիկը: Եւ մի կոտնդուն և բռնակալ կին էր որ արհամարհում էր «ամբոխը» և ընդունակ էր ամեն մի ոճրագործութեան, Գեղեցիկ և ոչ նւազ անառակ Մտրիա-Անտուանտը շրջապատել էր իրեն նւիրած աղնականների շքամբում: Աւազանիների հետ նա ամուսնուն մղում էր ամենախելառ ձեռնարկութիւնների:

Հենց որ Ազգային ժողովը սկսեց սահմանադրութիւն մշակել, արքունիքը սրտեց գործել ոչ ժով: Իր քայլերի մէջ ազատ լինելու համար, թագաւորը վճռեց հեռացնել պաշտօնից նախարար Նեկկերին, որը մի ժամանակ պնդում էր Ընդհանուր Ժողովի գումարման վրայ և որին ժողովօրքը սիրում էր ու սրը միակ աղնի նախարարն էր: Հենց միևնոյն ժամանակ էլ դէպի Փարիզ էին քաշում գորքեր ամեն կողմից:

Յուլիսի 12-ին աւառուից Փարիզում լուրեր տարածւեցին, թէ Նեկկերին պաշտօնազրկել են և գորքերն կուտակում դէպի մայրաքաղաք: Մի ակնթարթով սթախեցին փարիզեցիները, բոլորը թափեցին ժողոջ: Մերթ այստեղ, մերթ այնտեղ սկսեցին խորհրդակցել այն մասին, թէ ի՞նչ անել: Թիւրքի կոչւող արքայական այգում հաւաքեց անազին ամբոխ, նստարան բարձրանալով, Կամիլ Դեմուլէն հրիտասարդ գրողը կոչում էր ժողովրդին ազատամբութեան: «Մեր դէմաստում էր նա—դուքս են գալիս դէնքով, թող բոլոր աղնի քաղաքացիները դէնք գտնեն և պատրաստեն կուրս:

Բոլորը սկսած ձերբերից, կանանցից և երեխաներից աշխատանքի բռնեցին: Քաղաքացիները սկսեցին գինեկ, թնդանօթներ ու սուամբներ պատրաստել, զինանոց մանիլ և դէնք գրաւել: Կանայք բարձր յարկեթ

էին տանում քարեր, զինւորներին վրայ նետելու համար: Զօրքի մի մասն անցաւ ժողովրդի կողմը\*): Թագաւորի մօտ, մայրաքաղաքում՝ Վերսալում մնացին համարեա միայն գերմանացիները և դէպքաբացիները: օտարազգի գնդերը: Յաջորդ օրը, յուլիսի 13-ին քաղաքային տան շէնքից փող հնչեցրին, հրաւիրելով քաղաքացիներին ինքնապաշտպանութեան:

Վերջապէս յուլիսի 14-ին քաղաքի ամեն ծայրերից ազգաբնակիւթիւնը սկսեց տեղալ դէպի Բաստիլիա—այդ բանտ—ամրոցը: Բաստիլիան շրջապատւած էր 8 չորս յարկանի պարիսպով, որոնցից իւրաքանչիւրը միանում էր միւսի հետ 1½ սաժէն հաստութիւն ունեցող պատերով: Մուայլ խորհրդաւոր և անհասանելի Բաստիլիան ժողովրդի ատելութիւնն էր շարժում: Ինչ էր այնտեղ կատարւում ոճրագործների հետ, ո՛ւր էին նրանք թագցնւում, ոչ ոք ոչինչ չգիտէր, միայն լուրեր էին շրջում, թէ ով ժողովրդի կողմն անցած կուր էր բռնւում կառավարութեան դէմ, նրան կենդանի թաղում էին: Ահա ինչու ժողովրդին թոււում էր, թէ ամենից առաջ պիտի ոչնչացնել թագաւորական բռնապետութեան այդ մուայլ պատաւը: Ամբոցի բոլոր անկիւններից թնդանօթները սպառնանքով նայում էին ամբոխին, հենց որ հրապարակը սկսեց լեցել ամեն կողմից զիմող մտտաներով, ամբոցի պետն հրաման տրձակեց կրակել: Արիւնը հոսում է... անսպասելիութեան, իրարանցման առաջին վայրկեան և տպաւեկատաղութիւն...:

Ամբոխն ամեն կողմից շարժւում ու միանում է Բաստիլիան շրջապատւած է բարձր տեղեր ունեցող խրամով... Ամբոխը անվճռակաւ դրութեամբ կանգ է

\*) Զօրքի մի մասը դժգոհ էր և նրանից, որ լեղափոխութիւնից շէնք առաջ հրատարակւած օրէնքի նամաձայն միայն աղնականներն իրաւունք ունէին նշանակել ամենաբարձր պաշտօնների (սկսած զօրաբանակի ղեկավարների):

առնում... Ահա երկու բաներ կացիններով, չնայած  
 թողանալներին և գինւորներին, առաջ են նետում  
 սկսում կամուրջը քանդել... Ամբոխը նրանց յետեից,  
 Բատրիկան վերցրած է, ամբողջապես դլխատուած  
 անցրած սինների ծայրին: Բանտը քանդում են, և նրա  
 նից մի քար չի մնում: Երեկոյնան Փարիզը տօնում է ի  
 յաղթանակը:

Կայծակի արագութեամբ Բատրիկայի առման լուրը  
 տարածում է ամբողջ աշխարհում, ուրախացնելով ազա-  
 տութեան բարեկամներին և դողացնելով բռնակալներին  
 Յրանտիագի պատմապէս Միլլէն Ֆրանսիական զեապան  
 Սէզլերի\*) խօսքերից պատմում է, որ մինչև իսկ Գետեր  
 բուրգում Բատրիկայի առման լուրը ստանալով, շատե-  
 րը փողոցում հանդիպելիս համարուում էին քացախան-  
 չելով՝ «Բատրիկան վերցրած է»: Անցել է 100 տարի  
 և այժմ տմեն տարի յուլիս 14-ը Յրանտիայում համար-  
 ւում է ազգային տօնի օր: այդ օրը կողմակերպում են  
 խաղեր, հրավառութիւն և զարճութիւններ: Երբ թագա-  
 ւորին զեկուցեցին Փարիզի խառնակ վրճակի մասին, նա  
 բացականչեց՝ «Ձէ՛ օր դա ապստամբութիւն է»: Ոչ, ձեր  
 մեծութիւն, — պատասխանեցին նրան, — դա ապստամբու-  
 թիւն չէ, այլ յեղափոխութիւն»: Յաջորդ օրը թագաւորը  
 անմիջապէս գնաց Ազգային ժողով և խոստացաւ Նեկ  
 կերին կանչել պաշտօնի ու Փարիզից դոքթրը հեռացնել  
 Ազգը հաշուեց թագաւորի հետ, բայց և այնպէս յազ  
 թութիւնը մնում էր յաղթութիւն, որով չքանտաղեցի՞  
 օգուել: Նախ և առաջ փարիզեցիներն իրենք ընտրեցի՞  
 քաղաքային տան (մունիցիպալիտետի) ձայնաւորներին  
 որովհետև մի այնպիսի քաղաքում, որպիսին Փարիզն է  
 քաղաքային վարչութիւնն ունի հսկայական նշանակու-

\*) Միլլէն — ֆրանսիական յեղափոխութեան պատմութիւնը  
 ֆրանսերէն լեզուով է, Վ 234 երես:

թիւն: Ամենից առաջ քաղաքի քաղաքական իշխանու-  
 թիւնը գտնուում էր ազգացնակութեան ձեռքը. քաղաքա-  
 զուէն ընտրեց զիտնական Բալլին:

Ապա յեղափոխութեամբ ձեռք բերւած ժողովոյի  
 փրատունքները պաշտպանելու համար, կազմեց միլիցիա,  
 որ ստացաւ «Ազգային զվարդիա» անունը: Միլիցիայի  
 մէջ մտան բոլոր ընտրող քաղաքացիները\*) 20 ից մինչև  
 60 տարեկան, սրնք ընդունակ էին զէնք կրելու: Գւար-  
 զիսն իրեն միջից ընտրում էր սպաներին. զւարդիայի  
 պետ նշանակեց զենեքալ Լաֆայտը, որ նոր էր վերա-  
 դարձել Ամերիկայից, ուր նաև կուսել էր Միացեալ Նա-  
 հանգրերի ազատագրման շնամարտի գեներալ, բայց  
 թոյլ քաղաքապէտ Լաֆայտն ամբողջապէս համարւած էր  
 քուլժուական սգով. նա յոնկանում էր չափաւոր թա-  
 գաւորի իշխանութիւնը պակասեցնող սանտիմալութիւն:

Փարիզի օրինակին ճեռեցին և ուրիշ քաղաքներ:  
 Յեղափոխութիւնը տարածեց և մտաւ զիւրերը: Գիւ-  
 դացիները այրում և քանդում էին կալաճատէրերի ամ-  
 բոցները: Կալաճատէրերը պաշտպանւում էին, կանդ  
 չառնելով ոչ մի միջոցի առաջ: Մի ազնւական իր ամ-  
 բոցում քէֆ սարքեց և հրաւիրեց իր գիւղի բոլոր գիւ-  
 դացիներին: Քէֆի ժամանակ նա պայթեցրեց ամբոցը և  
 համարեա բոլոր հիւրերը մնացին փլատակների տակ:  
 Բայց ապստամբւած գիւղացիներին, որոնց ձօգնում էր  
 Փարիզը, արդէն չէր կարելի կանգնեցնել միայն իստու-  
 թիւններով:

Ազգային ժողովը հասկացաւ, որ այլևս դանդաղել  
 չի կարելի. ազնւականութիւնը և հոգևորականութիւնը,

\*) Իսկ ընտրողներն, ինչպէս այժմ կանաննք, բոլոր բա-  
 ջարայիները չէին, այլ միայն ունեւորչուտերի տնդամերը:

որոնց անմիջականօրէն ստաանում էր գիւղացիական ապու-  
տութեան ներդրամութեան կարելիութեան, գիւղատե-  
նի աշխատանքը կանգնեցնելու, յեղափոխութիւնը վեր-

ջացած յայտարարելու և կեանքի նորմալ ուղի մտցնելու  
մասին:

Խօսելով ներդրամութեան մասին, Դանտօն  
արդէն մերկացրեց իր բարեկամութիւնը ժիրօնդիս-  
տների հետ և առիթ աւելց կասկածներէ: «Ներդրա-  
միտները» կասկածելի էին այն մոմենտին, երբ յեղա-  
փոխութիւնը կրում էր հակայեղափոխութեան ամե-  
նատուժեղ և ամենակատաղի յարձակումը: Չափաւոր-  
ութիւնն, այդպիսի զեպրերում թուլութեան վկայու-  
թիւնն է. չափաւորութիւնը կարող էր խեղդել ժո-  
ղովրդի յեղափոխական եռանդը այն մոմենտին, երբ  
այդ եռանդը պիտի լարէր մինչև ծայր աստիճան,  
հակայական կուրի համար: Դանտօնը, ինչպէս և ժի-  
րօնդիստները ու խոշոր բուրժուազիայի իւրաքանչիւր  
ներկայացուցիչ, համարում էին յեղափոխութիւնը վեր-  
ջացած, յաղթած, իսկ յաղթողը պիտի լինի ներդրա-  
միտ: Մօնտանեարների ձախ թեի՝ Սեն-Փիլստի, Ռօ-  
բիսպիների, Կուտօնի և ուրիշների համար յեղափո-  
խութիւնը դեռ չէր յաղթել: Մեն-Փիլստն ասում էր՝  
«Ով յեղափոխութիւնը կիսով է անում, նա իրեն դի-  
րկմանն է փորում»: Այդպէս էր մասձում մանր  
բուրժուազիան, այդպէս էին կարծում բանուրները:  
Առաջինի գաղափարախօսները չէին գիտակցում, որ  
իրենց իզեայը ուտօգիտ է, որ մանր սեփականութեան  
թաղաւորութիւնը դեռ չի հատել և երբէք չի հասնի-  
րանւորների իզեօլօզները դեռ խարխափում էին խա-  
ւարում, խարխափելով ուղիներ էին փնտրում. նրանք  
ամենաձախ յեղափոխական տարրի ներկայացուցիչ-  
ներն էին:

Մօնտանեարները բաժանեցին երեք ֆրակցիայի,  
դանտօնիստներ, բօրիսպիերիստներ և հերերախո-

ներ: Ռօբեսպիերը այդ Ֆրակցիաները միացնում էր  
 թագաւորի եղխանութեան և ժիրօնդիսդներին գէն  
 մուտդ կուում, բայց ոչ դանձօնխաւաները և ոչ էլ ճե-  
 րերախաւաները: Էջին համապատասխանում նրա իրէջալին  
 Ռմանք ցանկանում էին կանչ առնել, ոմանք չափա-  
 դանց անաջ էին զնում: Իր կենցաղի պատկերով  
 հողերանութեամբ և հայեացքներով Ռօբեսպիերը ավ-  
 պիկ մանր բուրժուա էր և հանճարեղ ներկայացուցի-  
 իր գասակարգի: Նա ապրում էր Փարիզում ատալ  
 ճագործի ընտկարանում, համեստ, մաքուր և զուր-  
 կան սենեակում, որ նմանութեամբ շատ հետու էր  
 թէ Մարտի նկուղից: Թէ ժիրօնդիստուծի արկին  
 Ռօլանի շքեղ պաշտաներից: Աղքատութեան և շայ-  
 րութեան թշնամի լինելով, նա երազում էր մարդկու-  
 թեան համար ստեղծել ընտանեկան իրիլիա և փոքրիկ  
 կեանքն ազանովող միջոցներ: Նա սիրում էր յաճախ  
 կրկնել. «Հարկաւոր է, որ ամեն մարդ տարնկան ու-  
 ղենայ 3,000 Ֆրանկ արդիւնք և ոչ աւելին»: Ռօբես-  
 պիերը, որ անազարա աղնութեան և բարոյականու-  
 թեան տէր էր, նոյն յատկութիւնները պահանջում էր  
 և իշ ժամանակակիցներից: Նա ուզում էր բարոյա-  
 կանացնել, բարոյապէս մաքրել մարդկութիւնը և նրա  
 մէջ գորգացնել բարոյական առաքինութիւններ: Եւ-  
 կօրինցիների քաղաքական միութիւնը, որ դանուում  
 էր ամբողջապէս Ռօբեսպիերի անդեցութեան տակ  
 յաճախ վիճարանութեան նիւթ էր գարձնում բարո-  
 յականութեան և ժողովրդական կրթութեան հարցերը:  
 «Անկաշառք» աննկուն էր, անուաստն իւր քաղաքա-  
 նութեան մէջ: Երբ կոնվենտը յարուցեց գաղութ-  
 ների սարկութիւնը ոչնչացնելու հարցը, և երբ մի  
 պատիրտիկ նկատեց, որ այգպիտի քրտումը կարող է

գաղութները բաժանել Ծրանսիայից, Ռօբեսպիերը  
 լրացականչեց՝ «Թող կործանեն գաղութները միայն  
 թէ չկործանեն սկզբո նքները»: Նա ընթանում էր  
 արդէն մի անգամ որտուած ուղիով, որպէս գեմո-  
 կրատիայի տաքեալ և ժողովրդի կիսասուած: Ժա-  
 մանակակիցները հաւատում էին Ռօբեսպիերի հրա-  
 շարքոճ ոյժին, խոնարհում և պաշտում նրան: Ես  
 արդէն ստացի, որ նա յեղափոխութիւնից առաջ մա-  
 ւան պատժի հակառակորդ էր. դեռ 1791 թ. նա մի  
 փայլուն ճառ արասանեց մահւան պատժի գէն: Կա-  
 կած չկայ, որ տեոօրը չէր համապատասխանում նրա  
 ըրոյցական իրէջալին, բայց Ռօբեսպիերի սկզբունք-  
 ները, դեմակրատիայի շահերը, յեղափոխութիւնը վախ-  
 ճանին հասցնելու ճգտումը աւելի ու աւելի էին մը-  
 ղում նրան դէպի տեոօրի ճանապարհը: Ռօբեսպիերը  
 յեղափոխութեան հանճարն էր, ստեղծած և անուն  
 հանած յիդ փոխութեամբ. նա ամենից բարձր էր  
 դատում օրէնքը թագաւորի ժամանակ օրէնքն սանա-  
 կութեամ էր: Ժողովուրդը սպասամբեց օգոստոս  
 10-ին յանուն օրէնքի, ընդգէմ արքայական անօրի-  
 նականութեան, այժմեանից իշխում է օրէնքը: Մենք  
 ինտոյ կտեսնենք, թէ ինչպէս օրինականութեան այդ  
 ուղին կանխածամ կործանեց Ռօբեսպիերին. ևս ա-  
 սում եմ կանխածամ, որովհետեւ միևնոյնն է, նա պի-  
 տի կործանել. ապագան նրան չէր պատկանում:  
 Ռօբեսպիերը հաւատացող մարդ էր. նա հաւատում  
 էր բարձրագոյն արարածին և անարգում աթեիզմի  
 պրոդագանդը, պաշտպանում քահանաներին, բայց ի  
 դարկէ միան այն քան համերին, որոնք անցել էին  
 յեղափոխութեան կողմը: Այս բոլորը նրան վանում  
 էր այն «կատաղի անարխիստներից», Հեբերից, Վար-

էից, Ժակ Ռուից, Շալիէից, Ծօմեաից և ուր, որոնք սեփականութիւնը չէին համարում սրբազան սրբայն աստուծութիւն էին տալիս ոչօրին օրէնքներէ հանդէպ և օթնհատներ ու սրբապգծողներ էին Անդէասյան բանաստեղծներին խեղդելը, սեպտեմբերեան օրերը, Լիօնում կատարուած զլիատուեմները և մի շարք վայրազութիւններ, հերերտիստների ու մարտիրոսների արած գործերն էին. այդ պատճառով էլ Ռօբեսպիերը նրանց ասում էր: Կոմմունայ վարչութիւնը և զինուորական մինասրութիւնը հերերտիստներէ ձեռքին էին նրանց միջից Հերբէն ու Ծօմիան էին միայն ժողովրդականութիւն վայելում: Առաջինը, որ մի կշտող, սառնասիրտ մինչև անողորմութեան աստիճանի գինիք մարտ էր, ժողովրդականութիւն ձեռք բերեց շնորհիւ ին «Հայր Իրիչէն» րագրի, որից մի ժամանակ տարածուած էր 80 հազար օրինակ: Երկրորդը, որ կրակոտ էր և անկեղծ սիրած էր ժողովրդից իր անձնական յատկութիւններէ և հասարակ կենցաղավարութեան համար կօշկակարի որդի Ծօմիայը երևան հանեց ուրոյն յեղափոխական խանդավառութիւն յեղաշրջման առաջին օրերին: Օգոստոսի 10-ից յետոյ նա ընտրեց կոմմունայի դատախազ: Այդ պաշտօնում Ծօմիայը աչքի ընկաւ իւր մի շարք մարդասիրական ձեռնարկութիւններով: Նա վերջացրեց ուղղիչ աներում գործադրող մարմնային պատիժները, աղքատների համար ձրի ճաշարաններ բացեց և սկսեց հետապնդել անբարոյական պօռնողքաֆիք գրեւծները և նկարները: Հերբէն տիրապետները վարում էին քեռանդուն, հակակրօնական պրոպագանդ: Մատերիալիստ-փիլիսոփաների կերանները համարեա բոլորն էլ աթեիստներ էին: Առանձնապէս ուժեղ հակակրօնական շարժում սկսուեց

մարտի 1792 թ. հոկտեմբերից, երբ ինքը հոգեորականութիւնը, հրաժարելով երգում առլ սահմանազրութեան, ռէակցիայի հետ միասին դաւեր նիւթելով, մինչև իսկ դեղիս կեանք վարելով, քնակիչների մէջ մեղցնում էր վատահոթեան ամեն մի զգացմունք և լարդանք դէպի եկեղեցու սպասարները: Արդէն այդ ժամանակ սկսեցին յսել այն պահանջները, որ շուտով իրազործեց կոմմունան Ծօմեաի ազգեցութեան տակ: Հերերտիստները եկեղեցիները սկսեցին դարձնել հասարակական պահեստներ, ոսկէ իւսչերն ու ամանները, դրամ շինել, եկեղեցական վանդակապատերից թնդանօթառուները պատրաստել և պղնձէ հրեշտակներէից ու գանգիւրէից՝ թնդանօթներ ձուլել: Հերբէն տիրապետները համոզեցին փարիզցի կախկալուս Երբիլին հրաժարել իւր կոշտօրից: Երբիլի օրինակին հետևեցին շատ հոգևոր անձինք: Հրապարակով իր աթեիստական պրօպագանդով, Ծօմիան առաջարկում է կոմմունայի օրէնքով հաստատել «Բանականութեան աստուածացումը»: Նոյեմբեր 10-ին Փարիզի Աստուածանի եկեղեցում կայանում է մի ասոն ի պատիւ Բանականութեան. Աստուած չկայ, ասուածը—գա մարդկային բանականութիւնն է, որին միայն պիտի երկրպագել: Խուճկ ծխել և աղօթել: Եկեղեցու դէմ մղած կուռում հերերտիստները հասան նոր աշխարհային եկեղեցի ստեղծելու մտքին: Իւրաքանչիւր տասերորդ օրը, եկեղեցիներում ձիաակատարութիւն է արում ի պատիւ Բանականութեան. կարգացում է սահմանազրութիւնը, մարդու և բազարացու իրաւունքների դեկլարացիան:

Ռօբեսպիերը չափազանց զժգոն էր այն բնոյթի ստացաւ. հակակրօնական պրօպագանդը: Նա վա-

խնամ էր, որ կաթողիզմի դէմ սկսած կռիւը կարող է Թրանսիայի թշնամի դարձնել այնպիսի ժողովուրդներ, ինչպէս օրինակ բելգիականը, որի իշխող եկեղեցին կաթողիկականն էր: Ռօքեսպիերը մինչև իսկ հեղափոխականներին համարում էր օտար պետութիւններ, գործակալներ, որոնց բոլոր շափազանցութիւնները շահաւէտ էին միայն օտար պետութիւններին: Քաղաքացիական պատերազմներին զէմ յօգուտ յեղափոխութեան, նա չէր կարող: Ռօքեսպիերը կարողացաւ կռիւ սկսել միայն այն ժամանակ, երբ նրա տեսութեան և բոլոր «նորոգումիւնների» անխնայ հետապնդումը նրա վրայից վերցրին ներդաճութեան ամեն մի կասկած: Ահա թէ ի՞նչու նա միաժամանակ կռիւ սկսեց թէ Դանտոնի և թէ հեղափոխականների դէմ: Սէն-ժիւստը, որ Ռօքեսպիերի աջ ձեռքն էր, առգանդաւոր խելօք կերպով յարձակուում է դանտոնիստների վրայ և իր կողմը գրաւում հեղափոխականների յետևից զնայց մասսան: Կամիլ Դեմուլենը իր «Շին Կօրգիլիէր» լրատու գրում սկսեց շնորհ, բայց մշտապէս ոչ զգոյշ կռիւ տեսնուողի դէմ: Սէն-ժիւստը պատասխանում է նրան իր 1794 թ. գրած զեկույցման մէջ՝ «Դուք հանրապետութիւն էք ուզում—գրում է նա—բայց թէ դուք միաժամանակ զէմ էք այն բոլորին, առանց որի չի կարող կազմել հանրապետութիւնը, այդ զէկույցում դուք ժողովրդին կճղմէք հանրապետութեան փլատակները: Երբ ասակ, իսկ հանրապետութիւն ստեղծել, կնշտնակէ վերացնել այն ամենը, ինչ որ դիմադրում է նրան: Չի բերախտների հնաւրդը նրանց յեղափոխական ասպիկալիզմն էր: Սէն-ժիւստը հեղափոխականներից առելի ազդեցիկ էր: Երբ գանգատուում էր—շարունակում

նա—յեղափոխական միջոցներից, բայց մենք, համեմատած միաւ բոլոր կառավարութիւնների հետ, առելի շափաւոր ենք: 1788 թ. Լիգուրիի XVI-ը զեկականացեց 8000 մարդ երկու սեռից Փարիզի Մէլէ փողոցում և նոր կամուրջի վրայ, նա նորոգեց այդ ախտաբանները Մարս դաշտում: Թագաւորը կախում էր մարդկանց բանտերում: Սեն գետում գտնուած բոլոր խեղդւածները նրա գոնիքն էին: Նա բանտարկեւոր պահում էր 40,000 հազար մարդ, տարեկան կախում էր 1500 կոնտրաբանդիստ և սոցանում 3,000 մարդ: Փարիզի բանտերը լեցուն էին: Սովի ժամանակ թագաւորը զօրքեր էր ուղարկում ժողովրդի դէմ: Նայէք Եւրոպային այնտեղ կան 4 միլիոն բանտարկեւորներ, որոնց ճիշդը դուք չէք լսում: մինչդեռ դուք ձեր հայրենական շափաւորութեամբ յաղթութիւն էք տպեցնում: Կառավարութեան թշնամիներին Ձեր յեղափոխական արիքանալը մի տարայ ընթացքում զլետան է սկսեց 300 մարդ, իսկ միթէ խոզանական ինկիլիքիւն անկան չի արել: Մի՞թէ անգլիական արիքունաւորներն այդ տարի ոչ ոքի չեն սպանել: Մի՞թէ Բենդիլը չէր, որ խորտկում էր բելգիացիների երեխաներին: Նազար Գերմանիայի բանտերը, որ ժողովուրդը թագաւորում է, նրանց մասին ձեռք չեն առնում: Մի՞թէ որ է է մէկը կարող է խօսել Եւրոպայի թագաւորների ներդաճութեան մասին»: Ի՞նչ կարող էին պատասխանել դանտոնիստները: Նրանք ջախջախեցին, նրանց հետ պարտեցին և հեղափոխականները, երբ Սեն-ժիւստը շօշափեց նրանց ամեն բանումեղ ամբողջ սոցիալական հարցը: «Բարձրական կանգնում յեղափոխութիւն կատարեց—բայց յեղափոխութիւնը դեռ չի մտել անասական կարգերի մէջ—

չարունակում է նա— երկրի կառավարութեան հիմնա-  
քարը ազատութիւնն է, իսկ տնտեսական կարգերի  
գրամական արխտոկրատիան, որը ազատութեան և ժո-  
ղովրդի մէջ պատնէշներ է ստեղծում: Այդ պատնէշ-  
ները պիտի վերացնել և Սեն-ժիւստը սոցիալական  
ազֆորմների նոր ծրագիր է առաջարկում: Այդ ծրա-  
գիրն է՝ ապահովել ամբողջ ժողովրդի բարեկեցութիւ-  
նը, բաժանել ազգային կաշքերը աղքատներին, արդե-  
ւել կողմնակի ժառանգութիւնը և ապահովել բոլոր  
երեխաների կրթութիւնը: Այդ ծրագիրն այժմ մեզ  
թոււմ է անբաւարար և ուսույիրական, բայց նա մեծ  
լաւաջողութիւնն էր մեր նկարագրած տարեջրջա-  
նում, երբ գեւ թոյլ պրոլիտարիատը շէր ձեռակերպ  
ոչ իր մինիմալ ծրագիրը՝ և ոչ էլ իր կենտրոնական  
ու հիմնական պահանջը՝ արտադրութեան միջոցները  
փոխանակութեան հասարակացումը:

Սեն-ժիւստի գեկուցումը ուժեղ և խոր ազա-  
րութիւն գործեց ժողովրդի վրայ, ժողովուրդը հա-  
մոզեց, որ յեղափոխութիւնը կանչ չի առնում, չի  
բխացնում իւր եռանդը և հողս է առնում աղքատ-  
ների ու զրկածների մասին: Դանդոնիստների և երե-  
քնրտիստների համար այդ գեկուցումը մի մահազանգ  
էր: Երանք արդէն հասունացել էին գիլիտոմիւսայ-  
համար: Դանտոնիստների բանտարկութեան առիթ-  
ժառայեց կեղծիքի մի խայտառակ դեպք, որին մաս-  
նակից էր Փարք Դեպլեանտին. նա իր յեռակից առ-  
բաւ և ուրիշներին: Ռոբեսպիւրը ներքին հոգնակա-  
կառով ստորագրեց Դանտոնին և Դեմուլէնին ձերբա-  
կալելու հրամանը: Դանտոնին նա շէր կարող չգնա-  
հատել նրա մեծ խելքի և ուժեղ բնատրութեան  
մար, իսկ Դեմուլէնի հետ նա կապում էր երկխոս-

կան հասակից իսկ այժմ բաժանում է նրան իւր շէր  
սիրած կնոջից ու երեխայից: Բայց սկզբունքն ամե-  
նից բարձր է կանգնած. յեղափոխութիւնը խղճաւա-  
բութիւն չէ ճանաչում: Արդէն 1894 թ-ի յունարից  
Փարիզում յուրիք էին պատում Նքերտիստների  
պատրաստելիք ապստամբութեան մասին. խօսում  
էին նոյնիսկ այն մասին, թէ որոշած են ապստամ-  
բութեան ծրագիրն ու օրը: Հեքեադիստներն իրենց  
այսը գրել էին զինուորական միաստութեան վրայ,  
որի մէջ իրենց գործիքներն էին, զօրքի վրայ, որի  
մէջ կային նրանց գեներալները (Ռօնսէն, Ռօսսի-  
նիօլ): Մարտ 13-ի երեկոյիան ձերբակալեցին Հե-  
րիը, Մօնօրօն, Վէնսէնը և Ռօնսէնը. նոյն գործի մէջ  
հաւաքեցին եկաւ և զերմանական հարուստ բանկիր,  
հանգէս եկաւ և զերմանական հարուստ բանկիր,  
յեղափոխութեան փիլիսոփայ և «մարդկութեան բա-  
րեկամ» Անախարիս Կլոյը, որին Ռոբեսպիւրը ստում  
էր նրա աթիւղով պատճառով: Երանք բոլորը մեղա-  
դրոււմ էին օտարերկրացիների հետ ունեցած յարա-  
բերութիւնների և ժողովրդի պաշտպանների դէմ սիւ-  
թած դաւերի մէջ: Երկու շաբաթից յետոյ ձերբակալ-  
եցին Դանտոնը, Դեպլեանտին, Դեմուլէնը, Փիլիպ-  
պօն և ուր. Երանք մեղադրոււմ էին ներողամտու-  
թեան, հակայեղափոխականների և արքայական ընտա-  
նիքի հետ ունեցած յարաբերութիւնների մէջ: Կային  
արդեօք փաստեր: Կասկածելի է: Դանդոնին նախա-  
պաշտպանում էին պատրաստուող աղէտից, խորհուրդ  
էին տայիս նրան փախչել, բայց նա պատասխանում  
էր՝ «Ձեռն համարձակեի», — և սխալեց: Երանք հա-  
մարձակեցին: Դադապարտեալներին համարիա չթոյ-  
լատրեցին խօսել, չլսեցին նրանց պաշտպաններին:  
Դատարանները շտապում էին և վախճնում յազմունք

ներքեց. ժողովրդի մէջ լսում էր խուլ պատուհն: Բո-  
լոր յանցաւորները մտնան պատժի են զատապարտ-  
ւած: Եշաֆօտի վրայ Դանտօնը բթի տակ փսփսում է  
«Յ իմ կին, « իմ սիրելիս, ես այլեսս քեզ չեմ տես-  
նի»: Բայց պահ մի նա սթափուում է. «Համարձակ ե-  
ղիք Դանտօն» և իջնցնում է գլուխը: Դիլստուումից  
մի քանի օր առաջ Դանտօնն ասում էր՝ «Ես Ռօբեսպի-  
երին քարշ եմ տալիս իմ յեանից»:

Փրակցիականքի կոնւը, պատերազմն ու Վանդէան,  
գիլիօտիանայի անգաղօր աշխատանքը Փարիզում չեն  
խանգարում յեղափոխութեան բարենորոգիչ ձեռնար-  
կութիւններին: Ներքին երկպառակութիւնների ամե-  
նակոտնուումն ժամանակ Կոնվենտը, սկսում է Փարի-  
զում կազմակերպել նախնական կրթութեան գործը,  
նպաստ յատկացնել աղքատներին, հիւանդներին, ին-  
ժալիգներին և ծերերին, ծախել էմիգրանտներից դը-  
քաւած կտըր: Բանասրճների դրութիւնը սխտց մի  
քիչ բարելաւել: Մէկ ու կէս միլիոն դիւնօր ունեցող 14  
բանակների կազմակերպութեան գործը կուի դաշա էր  
բաշկ բաղմաթիւ քանուրդների, միւս կողմից երկրի  
ներսում աճում էր քանուրդական ձեռքերի պահանջը:  
Չօրաբռնակին հարկաւոր էին հրացան, կոշիկ, հա-  
դուստ, բոլոր անհրաժեշտ պիտանքները մատակարար-  
ող գործարանները ուժեղ կերպով աշխատում էին.  
կկեզեցապատկան և էմիգրանտների հոգերէ դնողները  
նոր ձեռք բերած կալուածների շինարարութեան հա-  
մար աշխատանք էին տալարկում: Յեղափոխութեանը  
զարկ տւեց ժամանակակից արգիւնարարութեան զար-  
գացման: 1794 թ. սկզբին Կոնվենտը մտցրեց աշխա-  
տավարձի մաքսիմում, բայց բանուորական ձեռքերի  
պահանջի շնորհիւ, բանուորներին յաջողում է արդի-

նարերութեան որոշ ճիւղերում ստանալ աւելի բարձր  
աշխատավարձ, քան Կոնվենտի հաստատածն էր: Ադ-  
գային տպարանի բանուորները պահանջում էին արգէն  
ութեամեայ աշխատանքի օր:

Յեղափոխութիւնը կարելով իր կապերը հին աշ-  
խարհի հետ. կհանք էր մտցնում նոր սովորութիւն-  
ներ ու կարգեր: Դիմումների ժամանակ գործ էր ած-  
ւում ոչ թէ «պարտն», այլ «քաղաքացի» բառը. իրար  
հետ դու էին անուանում: Մարտիկիկը դարձաւ ազ-  
գային հիմն: Կհանք մտցրեց զբամի և չափերի ստա-  
նակալային սխտեմը. Փրանկը դառաւ դրամական մի-  
աւոր, մետրը, լիտրը և դրամը՝ չափի ու կշռի միա-  
ւորներ: Բրիտանոնէական տոմարի փոխարէն հաս-  
տատեց նոր տարեցոյց, որով ամբին բաժանուում էր  
300 օրուայ, ամեն մի ամիս բաժանուում էր ոչ թէ շա-  
բաթների այլ դեկադների (10 օր): Կիւրալի օրուայ  
փոխարէն ստնուում է իւրաքանչիւր տասերորդ օրը:  
Ամիսները ստացան նոր անուններ համապատասխան  
տարւայ եղանակներին՝ վանդէմիկը (խաղաղի հաւա-  
քումը), քրիմնը (ժառախուղ), Փրիմէր (ցուրտ), նի-  
վօդ (ձիւն), պլիւվիօզ (անձրևներ), վանտօզ (քամի),  
ժերմինալ (հունձ), Ֆլօրէալ (ձագիկներ), պէրհալ  
(դաշտեր), մեսսիդօր (հունձ), սերմիդօր (շոգ), Փը-  
սիկաիդօր (մրցեց): Տարին սկսում էր սեպտեմբեր  
22-ից, այսինքն վանդէմիկի մէկից: Էրան տարուում  
էր 1792 թ.: Ս.յս տոմարը պարեց միայն մինչև 1805  
թ.ականը, Նապօլէոն Բոնապարտը երբ կայսր հռչակ-  
եց, վերականգնեց քրիստոնէական տոմարը:

Տոմարի դրամական և չափային սխտեմի հա-  
սարակացումը և աւելի նւաղեցրած ածները համա-

պատասխանում էին զարգացող արդիւնաբերութեան  
և առևտրի շահերին:

Ճշօրալական շղթաներից ազատւած բուրժուա-  
գիան ձգտում էր հարստանալու, աշխատանքի և բնական  
մթիւքննելի ազատ շահադործման. ներքին շահայի  
զարգացման և արտաքին շուկաների նւաճման, երկրի  
քաղաքական հանգստութեան: Տնօրի սէժիմը իսն-  
զարում էր բուրժուազիային: Առաջարկութիւններէ,  
ցիվիլզմի (քաղաքացիութեան) անցազրերի սրտածը,  
գէլիօտիան, միջկուից յօշոտող ամբողջ քաղաքներ,  
ապրանքների վրայ մաքսիմալ գների նշանակումը—  
այս բոլորը սահմանափակում էր ազատ առևտուրը և  
աղայ հարստացումը: Ազգի Ռօբեսպիերի մօրալիզա-  
ցիան, Ռօբեսպիերի քարոզած քարքերի հասարակ  
քնոյթը նկղացնում էին շուկան, սահմանափակում ճո-  
խութեան անարկաների պահանջը: Ամեն կողմից թշնա-  
մի գորքիսով բռնւած Թրանսիայի սահմանները ճրն-  
շում էին ուրիշ երկրների հետ առևտրական յարաբե-  
րութիւնները:

Բուրժուազիան յոյս ունէր, որ զեմագոգիական  
կաղճակերպութեան (հերերտիստների) գլխաւոր զեկա-  
վարների և չափաւոր յեղափոխականների (գանտօ-  
նիստների) գլխատուճից յետոյ երկիրը ազատ կըշնի  
և կձեռնարկի հարստութեան կուտակման ու կապի-  
տալին ազատութիւն կտայ... Տնօրը շարունակում  
էր: Ռօբեսպիերը փաստօրէն զարձաւ Թրանսիայի  
զիկտատօր. Կոնվենտը լուծւում էր. Փարիզի քաղաքա-  
գլուխ (Պալիան) և ազգային զւարդիայի պետը (Անրիօ)  
նրա զրած մարզիկն էին. Լաիօրինցիները մի-  
ութիւնը երբևէ չէր Ռօբեսպիերի անուշով: Յակօ-

բինցիներն ունէին իրենց կոմիտէներն ու գործակալ-  
ներն ամբողջ Թրանսիայում, պաշտօնեաներն ընտրւում  
և նշանակւում էին հաիօրինցիների շարքերից: Ռօ-  
բեսպիերի թշնամիները նրա մասին ասում էին, որ  
նա ձգտում է զիկտատուրայի, միապետութեան վե-  
րականգման: Ռօբեսպիերը տեսնում էր, որ իր իղէ-  
ալը գժւարութեամբ է իրագործւում և այն ժամա-  
նակ, երբ ինքն ու իր կողմնակիցները կոխ են մը  
դում յանուն սկզբունքների յատկութեան, յանուն  
զեմոկրատիայի և յեղափոխութեան զարգացման, նը-  
բանց գէմ և նրանցից անկախ մղւում է մի ուրիշ  
կոխ նիթական շահերի, լաւագոյն կեանքի, շահա-  
գործման կոխ. նա տեսնում էր, որ ոտքերի մակի  
պատւանսնը թուլանում է: Տեսնելով այս բոլորը,  
Ռօբեսպիերն աւելի էր կատարում, պարփակում էր իր  
մէջ և աւելի վճռականօրէն զիմում իր նպատակին  
Հասարակական կազմը և նոր հաստատութիւնները որ-  
չափ աւելի էին հաստատում իրենց իղէալի իրակա-  
նացման ճանապարհի վրայ, այնչափ աւելի էր թւում  
Ռօբեսպիերին, որ պատճառներն անհատներն ան և  
բաւախան է միայն չէգործացնել այդ անձատներին, որ-  
պէսզի ամեն ինչ ընթանայ իր երազած ուղիով: Ա-  
նա թէ ինչու բանտերը լեցուն էին, գլիօտիանն օ-  
րական գլխատում էր հարիւր մարդ և արարձանները  
բնակչութիւնը զանգատում էր զերեզմանոցի օջի  
փշանալուց և վախենում էր համաճարակից: Բանտում  
զեմ նստած էր սոցիօլօգ Կօնգօրէն, Օսլէն և քի-  
միայի հայր Լաիուալէն գլխատեցին. գլխատե-  
ցին նոյնպէս կանայք, կօհօտներ, որոնց սա-  
օններում հաւաքում էր ամէկ կրիստաւարու-

Քիւնը, Հերերի և Դիմուլէնի կանայք... Ժողովուրդը զարմանքով իրեն հարց էր առլիս՝ ի՞նչի են հարկաւոր գլխատուները. ի՞նչ օգուտ են բերում նրանք յեղափոխութեանը: Կոնվինտի անդամներն իրենք էին վախենում իրենց կեանքի համար, աչքի տակից նայում էին Ռօբեսպիերի վրայ, որին իրենց մէջ անւանում էին «բռնակալ», մտածում էին վերջ տալ տեսօրին... Ռօբեսպիերը աւելի սեփարացրեց նրանց վախը, երբ յունիս 10-ին նոր օրէնք հրատարակեց, որը զգալի կերպով կրճատեց բանտարկութեան և դատի ձգձգումը: Կոնվինտը երկչոտութեամբ բողոքեց այդ օրէնքի դէմ, ուղղում մտցրեց, պահանջելով Կոնվինտի թոյլտուութիւնը նրա անդամների բանտարկութեան ժամանակ: Դրանից մի ամիս առաջ Ռօբեսպիերը մի օրէնք հրատարակեց, որն ասում էր՝ «Ճրանսեփական ժողովուրդը ընդունում է զերագոյն էակը և հողու անմահութիւնը». օրէնքը անտակտ էր, որովհետեւ նա բանտում էր յեղափոխականների մեծամասնութեան հակակրօնական զգացումներին: Եւտով ՚ի պատիւ զերագոյն էակի կայացաւ մի տօն: Ռօբեսպիերը պնտում էր տօնակատարութեան առջևից, ձեռններում ծաղիկների մեծ փունջ, ամբիոնում զբաւեց ամենաբարձր տեղը Մարս դաշտի տօնախմբութեան ժամանակ: Նրա հակառակորդներն օգտուում էին այդ ամենից. և ասում, որ Ռօբեսպիերը իր ձեռքն է առել քաղաքացիական ամբողջ իշխանութիւնն ու ձգտում է հագեւոր իշխանութեան շէֆ դառնալ, կիսատուած: Այդ ուրիշը հաստատում էին մի կնոջ խորհրդատու դադարկախօսութեամբ, որն իրեն համարում էր «Աստուածածին», իսկ Ռօբեսպիերին իր մարգարէն: Անցնե-

լով յունիս 10-ի օրէնքը, Ռօբեսպիերը այլ ևս չէր երևում հասարակական փրկութեան Կոմիտէի ժողովներին, թողնելով օրէնքին շարունակել տեսօրի արիւնտ գործը: Կոմիտէի անտամներ Բայիօ-Վարէնը, Կօլէ Դէրբուան զանգատում էին, որ Ռօբեսպիերը քացախայում է ժողովներին... Հետզհետէ Ռօբեսպիերից անբաւականները սկսեցին հաւաքել միասեզ, համաձայնութեան դալ՝ «բռնակալի» վրայ գրեւ տալու: Ռօբեսպիերը մանուակի նման շարունակում է իր «մաքրելու» գործը: Անբաւականութիւնն աճում է, հակառակորդները փաստեր են հաւաքում «անկաղափն դէմ: Տերաբիլօրի 8-ին ըստ յեղափոխական օրացոյցի (1794 թ. յուլիս 26) Ռօբեսպիերը զալիս է Կոնվինտ, ամբիոն բարձրանում, կայծակ ու որոտ թափում յեղափոխական ոգու անկման վաճառման, չափաորութեան դէմ և աբիւն պահանջում... Բայց տարօրինակ է, ճառք վերջացած է, ծափահարութիւններ չկան: Ռօբեսպիերի բարեկամները առաջարկում են ըստ սովորութեան ճառը տպել և ուղարկել Ֆրանսիայի վայրերը: Կոնվինտը մերժում է. փոթորիկը մօտենում է: Թաշտրք օրը, տերաբիլօրի 9-ի պատմական օրը առաւօտից աղմուկ է, Փարիզում յուզմունք: Ռօբեսպիերի թշնամիներն ու կողմնակիցները պարագասում են կռիւ: Ամեն անդ փող են հնչում: Ռօբեսպիերը զալիս է Կոնվինտ, նրան մեղադրում են նա ուղում է արդարանալ, նրան թոյլ չեն տալիս խօսել: Նախագահն անվերջ զանգահարում է: Ռօբեսպիերը շնչասպառ է լինում զայրոյթից և կատաղութիւնից: «Մարդասպանների նախագահ, կամս ինձ խօսք վերջ ՚ի վերջոյ»—բացականչում է նա: Պատգամաւորները գոռում են՝ «Քող կորչի բռնակալը» և վճռում են բանտարկել նրան,



Մէն-Փիւստին և Կուտօնին: Բանա տանելին նրանց ազատում են, տանում քաղաքային խորհրդի շէնքը: Ռօրեսպիները հրաժարում է: Ի՞նչու: Օրհնականութեան ոգին է, վախը, կամ թէ օրհնքին դէմ չգնալու ցանկութիւնն են խօսում նրա մէջ: Կամ թէ այն վախը որ ապրտամբութիւնը անյաջող կլինի, և բանտրական թաղերը ջնհրելով նրան հեղհրախոսանքի գլխատումը չեն ձայն աայ իր կոչին: Մինչդեռ դիւժաբանութիւններ էին, քաղաքային խորհուրդ են մտնում ժանդարմները, նրանցից մէկը կրակում է Ռօրէիսպիների վրայ և վիրաւորում նրա կողմը: Փողոցներում կարգում են Կոնվենտի զեկրտը, որով Ռօրեսպիները: Մէն-Փիւստը և Կուտօնը յայտարարում են «օրհնքից դուրս»: Աիրաւոր Ռօրեսպիներին ըերում են Հասարակական փրկութեան կոմիտէի շէնքը: Յաջորդ օրը, տերմիդօրի 10-ին, երեկոյեան ժամի 4-ին գլխատումն է: Դատապարտւածներին, տանում են Էշաֆօտ: Յիմարացած ամբոխը վաղում էր Քուրգօնի յետեից, անիծում և ծագրում նրանց, որոնց սպտում էր պիլիօտինան: Փողոցները, ասանիքները լիքն էին ժողովրդով: Մինչ այդ ծածկւած անյայտ անձնաւորութիւնները լոյս աշխարհ էին ելել, հարուստներն ու կիսամերկերը՝ ծաղիկներով զարդարւած կօկօտները պատշգամբներից հրճում էին նայելով տեսարանին և ճչում՝ «Մահվան յանձնէք! Գիլիօտինային: Մի ինչ որ երիտայ Ռօրեսպիների ապրած տունը արիւնով շաղախեց, հրք թաղման Քուրգօնն անցնում էր նրա մօտից: Վայրինի էքստազով, կաշառւած կանանց մի խումբ նետեց դէպի բանտ, ուր դանւում էր պառաւ կին Դիւպլէյը\*) և խեղդեց նրան: Մի ինչ որ ազնւականի սպասաւոր պո-

\*) Դիւպլէյը տիրուհին էր այն տան, ուր սպրում էր Ռօրեսպիները:

կեց Ռօրիսպիների ճնշտին կապած փաթեթանը: Ռօրեսպիները ճչաց ցուից: Դանակն իջաւ նրա գլխին:

Նայն երեկոյին ազնւական Փարիզը ազմկալից ուրախ էր: Սմէն տեղ ներկայացուցին, բալեր և համերգեր էին կազմակերպել: Զեխութիւնը, հարստութիւնն ու անբարոյականութիւնը տօնում էին իրենց ազատութիւնը: Քաարոնների մօտ կանգնած են շքեղ տկեղօժ կառքեր, որոնց վաղուց չէր տեսել մայրաքաղաքը: Քաարոնի ելքի մօտ դոնապանները լիզրէ հագած հարցնում էին՝ յճՃէր, կերամայէ՞ք կառքը մատուցանել: Բանտերում անդապելի ուրախութիւն և ցնծութիւն է: Պահակներն անգօր են: Բոլոր բանտերը բացւած են: Ռօեսպիտաները համարում էին յեղափոխութիւնը վերջացած և հանրապետութիւնը կործանւած և նախատեսնում էին անցեալի վերադարձը: Դեսպօտիզմի և ճնշման անցեալի: Բայց նրանք սխալում էին: Յաղթած բուրժուազիան մտադիր չէր անցեալին վերադառնալ: Նա սկսեց յեղափոխութեանը վերջ տալ, բայց իր ձեռով: Բուրժուազիան պահեց այն ամենը, ինչ որ աւել էր յեղափոխութիւնը նրան ամբապնդելու իր դասակարգային իշխանութիւնը և նա անողոր կերպով դէն շարանց այն, ինչ որ աւելորդ էր, մի խանդարող ուռեցք և յիշեցնում էր դեմոկրատիան, հաւասարութիւնն ու ժողովրդական իրաւունքները:

ՅԵՂԱՓՈՒՅՈՒԹԵԱՆ ԼԻԿԻԴՒՄՅԻԱՆ

Ռօրեսպիները տապալեց: Սկսեց ուժեղիկաւ: Լիբերալ բուրժուազիան վերացնում էր եակօրինական դեմոկրատիայի հետքերը: Ռօեսպիտաներն աւելին էին ուզում—որչնչացնել յեղափոխութեան հետքերը: Տնօրը չզապարհեց, ընդհակառակը աւելի ուժեղացաւ, ասու-

ներն արեան, որի տեսքը կրգուում էր շեռմանս բուր-  
 տուազիային, գալ ձան հեղեղները ճիշտ է այդ արդէն  
 Ռօբեսպիերեան կազմակերպած տեոօրը չէր, այլ ռոսկէ  
 նքիտասարգութեանս անարխիստական և ռսև հար-  
 իւրեակներին՝ անօրն էր. մի տեոօր, որ գոր-  
 ծադրուում էր ոչ թէ յանուն յեղափոխութեան սկզբ-  
 բունքների և բարձր շանրի, այլ յանուն հարստաց-  
 ման հին կարգերի. մի տեոօր, որ կիրառուում էր ոչ  
 միայն քաղաքական գործիչների վերաբերմամբ, այլ  
 բոլոր ձեռք ընկածներին՝ կանանց, երեխաների  
 և ծեքերին:

Ռօբեսպիերին յաղթողները—տերմիդօրցիները,  
 ինչպէս մենք անւանեցինք, սկսեցին դիտատել ոչ թէ  
 հանրապետութիւնը տապալել՝ երազող ոտալիստան-  
 րին, այլ նրա անձնէր պաշտպաններին: Բաց-  
 ւած բանտերից գուրս եկան յեղափոխականների  
 (սրանց մէջ էր ղեմօկրատ գեներալ Փշը) հետ միասին  
 հարիւրաւոր պահպանողականներ, որոնց ցրեցին ամ-  
 բողջ Ֆրանսիա, հակայեղափոխական ազիտացիա ա-  
 նելու: Փարիզում կաշառւած սրիկաներ և գինետներ  
 յաճախողները խոշոր բուրժուազիայի և արիտակ-  
 րատների որդիների առաջնորդութեամբ կազմեցին  
 ռոսկէ կրրասարգութեանս խմբեր, զինուեցին արձձէ  
 ծայր ունեցող մահակներով և անպատիժ զբօսուում  
 էին Փարիզում, սղանելով հակօրինցիներին և ծեծելով  
 ու բռնարարելով նրանց կանանց: Աւագանի տիկիներ  
 ծափահարում էին իրենց ասպետներին, խրախուսում և  
 ոգևորում նրանց: Անպատեկիութիւնը այդ խմբերին  
 աւելի էր համարձակութիւն սալիս: «Ոսկէ երիտա-  
 սարգութիւնը» մանում էր ակումբի ժողովները, ընդ-

հատում նիստերը փրփուում և կոխ առաջացում:  
 Կոնվենաը օգուեց անկարգութիւններից և փակեց  
 հակօրինցիների ակումբը (10 ռեպուեմբերի 1794 թ.)  
 Հարաւային և արեելեան քաղաքներում կազմեցին  
 «Յիսուս», «Արև» ընկերութիւնները, որոնց ղեկավար-  
 ներն էին քահանաներն ու ոտալիստները: 1794 թ.  
 սեպտեմբերից մինչև 1795 թ. հազարաւոր յեղափո-  
 խականներ ռէակցիայի ղոն գառան: Կաթոլիկ տղա-  
 մարդիկ և կանայք դառել էին կատաղի, անողոր:  
 Մինչնադարեան ինկւրիդիայի տանջանքները նսե-  
 մանում են «սպիտակ տեոօրին» հանդէպ: Լիօնում  
 իռւժում են բանտերը, որ տերմիդօրցիները լցրել  
 էին յեղափոխականներով, կենդանի մարդկանց ալ-  
 բում, սպանում ծծկեր երեխաներին մայրերի աչքի  
 առաջ և այդ բոլորը կատարում էր «կեցցէ արքան»  
 բացականչութիւններով և արքայական հիմն երգելով:  
 Սղանութիւններից ու հրդեհներից յետոյ սկսում է  
 կողոպուտը: Նոյն տեսարաններն են կրկնում և հա-  
 րուում՝ Մարսելում, Նիմում, Տարասիզում և այլն:  
 Փարիզում Կոնվենաը գիլիօտինայի տակ էր դնում  
 կոմմունայի 65 անդամի, յեղափոխականների արի-  
 բունալի 15 գատաւորի, արստրում Գլիանեսա հասա-  
 րակական փրկութեան կոմիտէի 4 նախկին անդամ-  
 ների, ձերբակալում 17 մօստանեար պատուիրակների\*)  
 Կոնվենտի առաջին ակտը առաջին անհրաժեշտու-  
 թիւն ունեցող մթերքների վրայ մաքսիմալ գների  
 վերացնելն էր: Նորից բարձրանում են գները, սպե-  
 կուրիացիան ուժեղանում է, հաւաքագնողները լցնում

\*) Նոյն ժամանակ սկսում է Կարիէի և նրա ընկերները  
 գառը. Կարիէն և ընկերները կուում էին վանդէացիների դեմ.  
 նրանցից երեքը զիտաուեցին:

են իրենց պահեստները. չնայած 94 թւականի առատ հնձին, փարիզցիները սկսում են սովիլ, մեծ դժւարութեամբ կէս ֆունտ հաց ճարել ամբողջ ընտանիքի համար, վառելիքի, ածուխի կարիք դաւաւ. աստիճանատների կուրսն ընկնում է մինչև մէկ տասնհինգերորդական մասը նրանց նորմալ արժէքի: Արդէն ապրիլի (ժերմինալի) մէկից ժողովրդի ամբոխները դիմում են Կոնվենտ և հաց պահանջում: Կոնվենտը ցրեց նրանց: Անբաւականութիւնը և յուզմունքը ժողովրդի մէջ աճում էին և ընդունում սուր քնաւորութիւն: Կոնվենտի ոչակցիոն քաղաքականութիւնը, սպիտակ տեւորը, ուսելիստներին աղատելը և «պատրիօտ-յեղափոխականներին բանտարկելը աւելի էին ուժեղացնում դժգոհութիւնը: Ռօբեսպիերիստների և հերերախիստների թաղերը, եակօրինցիները և Բաբէֆի ահումբը մոռանում են իրենց երկպառակութիւնները, և դրա յարար իբար ձեռք են մեկնում: Մայիս 20-ին (պրէրիալ 1-ին) վաղ առաւօտից արւարձաններում յուզմունք է ափրում. ամեն տեղից խմբեր են հաւաքւում. կանայք և երեխաներ զանգակները ձեռքներին, քաղաքացիներին փողոց են կանչում, հրաւիրում են նրանց Կոնվենտ գնալ և հաց պահանջել. ժողովուրդը արանջում է, դժգոհում, որ Ռօբեսպիերի թշնամիները գլխատեցին նրան միայն նրա համար, որ ժողովրդին սովի և մահաւան մատնեն. բոլորը կարդում են բանտարկած Բաբէֆի լրագրի վերջին համարը, Սենտ-Անտուան, Սեն-Մարսօ արւարձաններում զօղանջները հնչեցին. մի քանի քաջասիրտներ մտնում են քաղաքային խորհուրդ և կազմում այնտեղ ինսուբրէկցիօն կոմիտէ: Շատ չանցած մայրաքաղաքի բոլոր պատերին կպցւեց մի մանիֆէստ՝

Ժողովրդի սպաստամբութիւնը հաց ստանալու և իրաւունքներ նւաճելու համար

Նկատի առնելով, որ կառավարութիւնը ժողովրդին մատնում է սոված մահաւան և չէ կատարում իր խոստումները, նկատի առնելով, որ կառավարութիւնը գործում է անարդար կերպով, որպէս ուղուրպատօր և բռնակալ, կամայականօրէն ձերբակալելով և թոյլատրելով սպանել բանտերում նրանց, որոնք ունին բաւականաչափ առնականութիւն և առաքինութիւն հաց և ժողովրդական իրաւունքներ պահանջելու.

Նկատի առնելով, որ ուղուրպատօրական և բքոնապետական կառավարութիւնը հիմնում է իր ոճրագործական յոյսերը և ոյժը միայն ժողովրդի թուլութեան, տգիտութեան և աղքատութեան վրայ.

Նկատի առնելով, որ այդչափ անողոր կառավարութիւնը կարող է գոյութիւն ունենալ միայն այն պատճառով, որ ժողովուրդը թուլամորթութիւն սւնի վախենալու նրանից և նրան հպատակւելու . . . . .

Ժողովուրդը որոշում է՝

Այսօր առանց յետաձգելու Փարիզի քաղաքացիները և քաղաքացուհիները միատեղ ուղևորւեն Կոնվենտ, պահանջելու

- 1) Հաց.
  - 2) 93 թւի սահմանադրութեան անյապաղ կիրառումը.
  - 3) Հաց պահանջելու և կարծիքներն ազատ արտայայտելու համար բանտարկւած քաղաքացիներին ազատել.
  - 4) Կոնվենտի ցրումը և նոր ազգային ժողովի գումարումը . . . . .
- Անհատը և սեփականութիւնը դաւնում են ժողովրդի պաշտպանութեան տակ:

Առաջօրեան ժամը 11-ին բացեց Կոնվենտի նիստը: Զինւորական ուժերը, որ պիտի պաշտպանէին Կոնվենտը, գեռ չէին եկել: Մինչդեռ ամբոխն արդէն շարքել էր հասա գուռը, խուժել Կոնվենտ: Նախագահը իրեն կորցնում է, նա նկատում է ամբոխի վրայ մի գննորայի և հէնց այնտեղ նշանակում նրան գեռ չեկած զինւորական ոյժի ժամանակաւոր պետ: Չնայած ամբոխը զինւած էր նիզակներով, սրերով և կացիններով, նա ոչ ոքի ձեռք չէր առնիս: Կոնվենտում շարունակ ճշում են, աղմկում: Պատերակները լուռ են ոչնչի չեն ձեռնարկում. ամբոխը առանց դեռ կավարների, գործողութիւնների ծրագրի, բաւակահանում է «հաց», «հաց», «Յ թւականս սահմանագրութիւն» ձիչերով: Այգպէս անցնում է մի քանի ժամ: Երեկոյեան պատգամաւոր Յէրօն նետում է դէպի ամբոխն պաշտպանելու նախագահին, որին ամբոխը շրջապատել էր: Ներքնից գնդակ է արձակում մի սպայի վրայ, բայց այդ գնդակը սպանում է Յէրօին: Վերջինիս ամբոխը ընդունում է ասկէ երիտասարդութեան» ոգևորող Ֆրէօնի յեղ. կտրում է նրա գլուխը և հազցնում նիզակի ծայրին: Երեկոյեան 10 ի մօտ մօնտանհար-պատգամաւորները առաջարկում են քւէարկել ժողովրդի ներկայացրած պետիցիան: Պետիցիայի բոլոր կէտերը ընդունւում են: Սակայն այդ ժամանակ կառավարական գործակալներին յաջողեց հաւաքել Ազգային Գլխարդիայի մի քանի գումարտակ ազնւականների թաղամասերից: Երբ գումարտակները խուժեցին Կոնվենտ, արդէն իր պահանջներին բաւարարութիւն ստացած ամբոխը սկսել էր ցրել, Կոնվենտը զինւած ոսկալիստների պաշտպանութեան ներքոյ ազատ շնչաց, և լեզուն բացեց: Մի քիչ առաջ քւէարկւած զեկրեանները մերժեցին: 9 մօնտանհար-

պատգամաւոր ձերբակալեցին և յանձնեցին զինւորական դատի. ժողովուրդը մարգասպանների, արիւնարբունների, գողերի, ճարնի յաջորդ ելըը տեսնելու անարժանների» անունը ստացաւ: Երբ յաջորդ առաւօտը արւարձաններում յայտնի դարձան Կոնվենտի որոշումները, նորից զօղանջները հնչեցին: Բանւորական բոլոր թաղամասերը (Պօպէնկուր, Մօնտրէյ, Կէնէ-Վէն, Մէնտ-Անտուան, Մէն-Մարսօ) խիտ սիւներով, թաղանօթներն առաջ գցած շարժեցին դէպի Կոնվենտ: Կոնվենտը նրանց դէմ ուղարկեց ազգային զվարդիան—Փարիզի արխուսօլրատական հարուստ կէսը: Երկու բանակ կանգնեցին դէմ առ դէմ: Փարիզը երբէք չէր տեսել զինւած ոյժերի այդպիսի կուտակում: Յեղափոխութեան ժամանակ, պատմութեան ընթացքում առաջին անգամ զինւած պրոլետարիատը դէմ առ դէմ բաղխում է զինւած բոլոր զոյնների (սկսած ոսկալիստներից մինչև հանրապետականները) բոլորժուղիայի հետ: Այդ շահագործողների և շահագործւողների սկսուող դասակարգային կուրի առաջին էպիզօդն էր:

Երկու թշնամի իսնակն էլ զիտակցում էին, որ կռիւը լինելու է սարսափելի և արիւնահեղ. ով կտանի յաղթութիւնը—դժւար է ասել: Ոյժերը համարեա հաւասար էին, ոչ ոք չէր համարձակուլմ նախայարձակ լինել: Լախլոտ, զոզողօցող Կոնվենտը տեսնելով, որ կռիւը դեռ չի սկսւում, կորցնելով յոյսը իր պաշտպաններից, ընդրում է 6 պատգամաւոր և ուղարկում նրանց բանակցելու աղտաւորների հետ: Ժողովուրդը ընդունում է առաջարկը և իր կողմից ուղարկում է Կոնվենտ նոյնպէս 6 պատգամաւոր: Խաղաղութիւն է մի խայտառակ տեսարան: Կոնվենտը խոտանում է բաւարարել ապստամբների

բարձր պահանջները: Նախագահը համբուրում է ժողովրդի ղեկավարներին մէկին. ղիւրահաւատ բանւորները, մի նոր անգամ էլ խաբած, ցրում են իրենց արւարձանները՝ Կառավարութիւնը օգտուում է այդ հանգամանքից: շրջակայքից հեծելազօրը և հետեակ զօրքը քաշում է Փարիզ և զինում «ոսկէ երիտասարդութիւնը»: Յաջորդ օրը մայիս 22-ը համեմատաբար հանդիստ է անցնում, 23-ի լուսաբացին «ոսկէ երիտասարդութեան» վոհմակները մոտնում են Սենտ-Մնտուան արւարձանը, վրայ հասնում խլում թնդանօթները և առաջ անցնում: Բայց որչափ նրանք մոտնում էին արւարձանի խորքը, սարսափով նկատում են, որ իրենց յետևից նահանջի ճանապարհը, կտրելու նկատումով, ընկիւնները բարիկազներ են շինում իսկեռում հաւաքել և սրերով: «Ոսկէ երիտասարդութեան համար շատ հեշտ էր արտիլերիայով ճանապարհը բանալ: Բայց քնքշակեաց աղնւական պատանիները որ աւելի սովոր էին ոսկեզօծ սրահներին, քան թնդանօթային կրակին, անմիջապէս անձնատուր են լինում, վերադարձնում թնդանօթները և իրար յետևից, ծածկած ամբոխի ծաղրու ծանակով փախչում են վտանգաւոր թաղամասից: Չնայած յաջորդ օրը արւարձանը հանդիստ էր, բայց և այնպէս զօրքերին հրաման տրւեց պաշարել նրան. 3000 զինւոր (արտիլերիա, հետեակ և հեծելազօր) շրջապատում են Սենտ-Մնտուանը և սպառնում ու մբակոծել, եթէ ընկիւններն անմիջապէս չյանձնեն թնդանօթներն ու հրացանները: Տանտէրերը, արհեստանոցների տէրերը աղաչում են բանւորներին անձնատուր լինել, չենթարկել արւարձանը հաստատ կործանման, յիշեցնում են նրանց Կոնվենտի խոստումը: Բանւորները համաձայնեցին և թոյլ

աւին իրենց զինաթափ անել: Կոնվենտը ի հարկէ իր ոչ մի խոստումը չկատարեց:

Այդպէս վերջացաւ 18-րդ թւականի վերջին զինւած ապստամբութիւնը: Բուրժուազիան իր ձեռքի կապերը քանդեց. նա դեռ մի թշնամի էլ ունէր— ոսեալիստները: Կարող էին արդեօք ոսեալիստները յուսալ իրերի անցեալ դրութեան, ո նախկին տոհմի վերականգման իրեն նախ-յեղափոխական ֆեոդալական կարգի փայլի վրայ: Ռոսեալիստները այնքան քիչ յոյս ունէին այդ առթիւ տերմիդօր 9-ից յետոյ առաջին տարին, որ ծածկում էին իրենց իսկական միտումները, ցոյց էին տալիս իրենց իբրև հանրապետականներ, օգնում էին չափաւոր ժրթողիստներին նրանց կուռում ընդդէմ եակօբինցիներին, Կոնվենտի թուլութիւնը, անվճռականութիւնը, հակայեղափոխական քաղաքականութիւնը, նրա դիմումը արիստօկրատիայի օգնութեան դեմօկրատիայի դէմ մղեղ կուռում— այս բոլորը ոսեալիստներին յոյս էր տալիս և ստիպում նրանց զուլի բարձրացնել ու զիտալիս և ստիպում նրանց զուլի բարձրացնել ու զիտալիս և ստիպում նրանց զուլի բարձրացնել ու զիտալիս հանել: Փարիզի մայիսեան ապստամբութեան ճնշումը նրանց համար ազդանշան ծառայեց զինւորական զործողութիւններին: Բուրժուազիան ինչպէս մինք արդէն տեսանք, թաղաւորական իշխանութեան, դէմ ոչինչ չունէր, բայց բուրժուազիայի շահերը պահանջում էին, որ այդ իշխանութիւնը լինի սահմանափակ և հովանաւորի իր շահերը, որպէսզի նա հաշաւի յեղափոխութեան նւաժումներին հետ: Բուրժուաների տոհմը անցրել էր իր ժամանակը— նրա և իշխանութեան մէջ աճել է 4 միլիոն սեփականատէրերի պատը. այդ սեփականատէրերը ձեռք են բերել հողւորականութեան, էմիգրանտների հողերը՝

յեղափոխութիւնը կատարել է իր գործը, և վերջնակա-  
նապէս կտրել անցեալից:

Ռօսալիստները այդ չէին տեսնում, ուստի նրանք  
ղեռ յուսում էին: Առևտրա-արդիւնաբերական Անդլիան  
թշնամբար էր վերաբերում զէպի Ֆրանսիական յեղա-  
փոխութիւնը. նրա կողքին հասունանում էր մի ւսեղ  
մրցակից՝ Ֆրանսիական բուրժուազիան, որ ազատել էր  
Ֆէոդալական կապանքներից և պատրաստ էր լցնել հա-  
մաշխարհային շուկան իր կերտածներով ու սպրանքնե-  
րով: Ժեմանի մօտ եղած կուլից յետոյ Անդլիան միացաւ  
կօալիցիային. օգտուելով ռօսալիստների առաջարկով, նա  
իր ձեռքը ձգեց Տուլօնը և յայտարարեց անդլիական քա-  
ղաք. ձիշտ է նա երկար չդիմացաւ այնտեղ: Յեղափոխա-  
կան զօրքերը յետ վերցրին Տուլօնը, Այժմ 1795 թ. յու-  
կիսին Անդլիան կազմակերպել էր մի ամբողջ նաւատոր-  
միդ, որի վրայ գտնուում էին մի քանի հազար էմիգրանտ.  
Նա այդ նաւատորմիդն ուղարկեց պարէնով ու հրացան-  
ներով զէպի Բրիտանի ափերը: Նաւատորմիդը կառչեց  
Կիրթօն նաւահանգիստային քաղաքին. էմիգրանտները  
ափ իջան և միացան վանդէպիներին (վերջիններիս թիւը  
Կիրթօնի մօտ 10,000-ի էր համարում): Գործողութիւնների  
ծրագիրն էր՝ վերջնել Նանտ քաղաքը և այստեղից միա-  
նալով վանդէական-բրիտոնական մնացած բանակի հետ  
Շարէտի և Կադուզայի առաջնորդութեամբ գիմել զէպի  
Փարիզ: Այդ ծրագիրը չյաջողւեց. էմիգրանտներն իրենց  
զիւզացի կողմնակիցներով շրջապատւած էին գէներալ  
Օչի զօրքերով և կտր 'ի դուրս շարդւեցին:

Փարիզի ռօսալիստները որոշեցին սխ հանել Կիր-  
թօնի մօտ կրած պարտութեան համար և իրենց բախտը  
փորձել մայրաքաղաքում: 1795 թ.ի հոկտեմբեր 4-ին

ռօսալիստների զինւած գումարտակները շարժւեցին զէպի  
Կոնվենտ, որը շունէր բաւականաչափ զինւորական ոյժ  
ապստամբներին դիմադրութիւն ցոյց տալու: Բանւորա-  
կան թաղամասերն, ինչպէս մենք դիտենք, զինաթափ էին  
արւած: Կրիտիքական բուպէին Կոնվենտը որոշում է դի-  
նել այն նոյն Սենտ-Անտուան արւարձանը, որին նա քիչ  
առաջ պատրաստուում էր ոչնչացնել: Զօրքերի հրամա-  
նատար էր նշանակւած երիտասարդ սպայ «փոքրիկ կօր-  
սիկացի» Նապօլէօն Բօնապարտը: Երկկայեան ժամը 4-ին  
սիկացի» Նապօլէօն Բօնապարտը, որը 2 ժամից յետոյ վերջա-  
սկււեց ապստամբութիւնը, որը 2 ժամից յետոյ վերջա-  
ցաւ ռօսալիստների կատարեալ պարտութեամբ: Յաղ-  
թութեան փառքը ստացաւ Բօնապարտը, որին մինչև այդ  
լայն հատարակութիւնը չէր ճանաչում և որի մասին  
սկսեց խօսել ամբողջ Փարիզը ապստամբութեան յաջորդ  
օրը:

Նապօլէոնով սկսեցին հետաքրքրուել մինչդեռ նրա  
անցեալը ոչ մի նշանաւորքբան չէր ներկայացնում: Նա-  
պօլէօն Բօնապարտը ծնուել է Կորսիկա կղզում, Անաչէօ  
փոքրիկ քաղաքում 1768 թ, նա սկզբում երթւում է  
Ֆրանսիայում, ձիւլիաների ձեմարանում, իսկ յետոյ զին-  
ւորական դպրոցում: Նրա ընտանիքը հարուստ չէր, և  
հօր մահից յետոյ Նապօլէօնը յաճախ դժւար օրեր էր  
սպրում: Մեծ յեղափոխութեան ժամանակ Բօնապարտը  
ոչնչով աչքի չէր ընկնում, շունհարով ոչ մի հաստատուն  
համոզմունք, փառաւէր Նապօլէօնը սկզբում յարում  
էր կամ այս, կամ այն կուսակցութեան: Յեղափոխու-  
թեան առաջին տարին, երբ նա համոզւած չէր դեռ վեր-  
թեան առաջին տարին, երբ նա համոզւած չէր դեռ վեր-  
ջին յաղթանակին, նա իրեն ցոյց էր տալիս որպէս  
թազաւորի հաւատարիմ ծառայ: 1792 թ. օգոստոս 10-ից  
յետոյ, վախենալով յաղթողների ճնշումներից, նա դառ-

նում է կրակոտ յեղափոխական, իրեն անւանում է մա-  
րտիրոս սկսում է յաճախել եակօրինցիների ակումբը՝  
կիօնում ճնշում է ժիրօնդիստանների և ռօեալիստանների աս-  
ստումբուլիւնը, մասնակցում է Ռօքեսպիերի եղբոր հետ  
Տուլօնի կուբին: Տերմիդօր 9-ից յետոյ Բօնապարտը  
բանա է ընկնում, որպէս ռօքեսպիերիստ, բայց շուտով  
արձակւում է: Հանւած բանակի ցուցակից նա մաշում է  
զինւորական մինիստրութեան դռները, պաշտօն փնտրե-  
լով: Զեռքի տակ չունենալով յարմար պետ, հոկտեմբեր  
4-ին Կոնվենտը, Բաբբասի վկայութեամբ, յանձնեց Բօ-  
նապարտին Կոնվենտը պաշտպանող զօրքերի գլխաւոր  
հրամանատարութիւնը: Այսպէս սկսեց զինւորական  
քաղաքական կարիերը այն մարդու, որը 9 տարուց յետոյ  
զարձու Փրանսիական կայսր:

Մենք արդէն տեսանք, որ նբանսիայի մղած կռիւ-  
ները յեղափոխութեան առաջին տարին կրում էին զուտ  
պաշտպանողական բնաւորութիւն. նրանց առաջին  
ինդիւրն էր—հեռացնել օտարերկրեայ զօրքերը Փրանսի-  
ական հողից և պիմադրել օտարերկրեայ թագաւորների  
և Փրանսիական ռէակցիօնների միութեան: Յեղափոխա-  
կան բանակի յաղթութիւնները և ճնշած ժողովուրդների  
ոգևորութիւնը չնորհիւ այդ յաղթութիւնների, 93 թւի  
դեմոկրատիայի մէջ յղացրին այն միտքը թէ յեղափոխու-  
թեան դրօշակը պիտի դուրս բերել Փրանսիայի սահման-  
ներից և օգնութեան գալ յանուն ազատութեան կուռզ  
ժողովուրդներին: Այդ պատերազմի երկրորդ շրջանն էր,  
երբ յեղափոխական զօրաքանակը մուտք գործեց Գեր-  
մանիա, ազատեց Բելգիան աւստրիական լծից: Բայց  
բուրժուազիայի քաղաքական ուժեղացումը, նրա ձգտու-  
մը հարստութեան և արտաքին շօկանների հետամտութիւնը  
պատերազմին տւին նոր, նւաճողական բնաւորութիւն:

Փրանսիան սկսում է լախնացնել իւր սահմանները, բռնա-  
զբօսիկ կերպով միացնել կամ հպատակեցնել իւր ազդե-  
ցութեան օտար երկիրներ: Նւաճողական քաղաքականու-  
թիւնը գլխաւոր դերը սուց բանակին, 92 թւի կամա-  
ւորներին դարձրեց պրօֆեսիօնալ զինւորականներ, օժան-  
դակեց Փրանսիական ժողովրդի զինւորական ողու զար-  
դացման, առաջ բերեց զինւորական դաս, որը սկսեց ձգտել  
ընդհանուր իշխանութեան: Այսպիսի էր յեղափոխու-  
թեան լիկվիդացիայի շրջանի բնաւորութիւնը 1794 թւից,  
Ռօքեսպիերի անկման օրից, մինչև 1804 թիւը Նապո-  
լէօնին կայսր հրատարակելը:

Փրանսիայի համալխարհային քաղաքականութեան  
փոխելուց յետոյ, աստիճանաբար փոխեց և բանակի  
բնոյթը, Հին, ռէակցիօն ոգով համակւած գեներալների՝  
Լաֆայտի, Դիւմուրիէի, Կիւստինի տեղերը 93 թւականին  
զբաւեցին երիաստարդներ, ժողովրդից զուրս եկած, յե-  
ղափոխական օգևորութեամբ այրող և կուռզ ոչ թէ  
փառքի, այլ հանրապետութեան համար: Գեներալները  
նշանակւում էին տեղն ու տեղը, կուբի դաշտում ոչ չնոր-  
հիւ նրանց արիստօկրատական ծագման, այլ միայն զին-  
ւորական ընդունակութիւնների և առնականութեան  
ւորական ընդունակութիւնների և առնականութեան  
չնորհիւ: Երիտասարդ լինելը չէր խանգարում պաշտօն-  
ների բարձրացման: Կլերերը 40 տարեկան էր, Ռօսինիօլը՝  
34, Ժուրգանը՝ 31, Օշուն՝ 25, Դէզէն՝ 25, Մարսօն՝ 24,  
և նրանցից ոմեն մէկը մի քանի ճակատամարտ էր յաղ-  
թութեամբ վերջացրել, հրամանատար էր հետևակ կօր-  
պուտի, կամ ամբողջ զօրամասի: Նրանց անցեալում ոչ  
մի տկանաւոր բան չկար. նրանցից շատերը սկսել էին  
իրենց կարիերը գրեւորով 89 թւականին ազգային դար-  
դիականներ: Ռօսինիօլը առաջ հասարակ բանւոր-ժա-

մագործ էր, Ժուրղանը—գործակատար. Օչը կառապանի  
որդի էր, իսկ Կլէքէրը քարտաշի որդի: Ազատութիւնը  
Ֆրանսիան հարստացրեց այնպիսի շատ տաղանդաւոր և  
հանճարեղ անձնաւորութիւններով, որպիսին չէր կարող  
իմանալ և չզիտէր բռնակալական հասարակակարգը, որ  
հիմնւած էր ժողովրդական տգիտութեան և ստրկութեան  
վրայ: Ժողովուրդը վերակենդանացաւ և նրա ծոցէց  
գուրս եկան հերոս-մարտիկներ, այն «անմահները», որոնց  
անունները յեղափոխութիւնը մտցրեց պատմութեան  
էջերի մէջ:

Մակայն վերադառնանք պատերազմին, որ մենք  
թողինք հենց այն մոմենտին, երբ դաւառային փաստա-  
բանի որդի, ղինւորական ձարտարադեա Կարնօն կազմա-  
կերպեց 14 բանակ: Առաջին փայլուն յաղթութիւններէն  
յետոյ (Վալմի, Ժնման) ֆրանսիացիները սկսեցին պար-  
տութիւններ կրել: Դիւմուրիէի դաւաճանութիւնը առիթ  
գտաւ նահանջին բեկլիայից. Ֆրանկֆուրտը և Մայնցը  
պաշարւած էին և նորից անցան միութեան ձեռքը. Ան-  
զլիան պաշարել էր ծովային նաւահանգիստները, իսկ  
խաղանական զօրքերն անցան Պրիէնէյը: Կարնօն, որին  
հասարակական փրկութեան կոմիտէն յանձնարարել էր  
«յաղթութիւնը կազմակերպել» կօալիցիայի հին ռազմա-  
գիտական միջոցների գէժ երևան հանեց նոր ղինւորական  
սաքարիկ, որին յետագայում հետեւեց Բօնապարտը. այդ  
տաքարիկն էր՝ յարձակում «մաստաներով»: Հետևանքները  
փայլուն էին: Հիւսիսային բանակը ջարդեց իօրքի գուր-  
սին և ստիպեց անգլիացիներին հեռանալ Դիւնկերկից:  
Ժուրղանը յաղթեց Կօբուրգի պրինցին Վատինիի մօտ:  
Իսկ Օչը և գեներալ Պիչգրէն հարկադրեցին Բրաուն-  
շվայցի դուքսի բանակին նահանջել Հոննոսի միւս կողմը:

նորից մտան Բեկլիա և այնտեղից ուղղեցին Հոլան-  
դիա: Հոլանդիայի պատրիօտները ուրախութեամբ ղիմա-  
ւորեցին Ֆրանսիական զօրքերը: Շտապալուէրը և Վիլ-  
հելմ 5-դը փախան Անգլիա: Հոլանդիան իրեն յայտա-  
բարեց հանրապետութիւն և դաշինք կնքեց Ֆրանսիայի  
հետ: Պրիէնէական զօրքը 1794 թւական Սև Սարի մօտ  
մղած ճակատամարտից յաղթած դուրս եկաւ, երեք օր-  
ւայ կաւից յետոյ: Իսպանիան և Գրուսիան հարկադրե-  
ցին խաղաղութիւն կնքել Ֆրանսիայի հետ (Բազելում  
95 թւի կիսամիջին), Գրուսիան շտապեց իր ձեռքի կա-  
պանքները քանդել. մի կողմից ճեմիգրանտները քաշեցին  
նրան անյաջող և սնանկացուցիչ կաւի Ֆրանսիայի դէմ,  
իսկ միւս կողմից Եկատերինէ 2-դը, որ յեղափոխութեան  
դէմ խաչակիրաց արշաւանքի ազդանշանը տւեց, կօալի-  
ցիային ոչ մի ղինւոր և ոչ մի կողէկ չմատակարարեց:  
Մինչդեռ Գրուսիան և Աւստրիան զբաղւած էին արև-  
մտեան սահմանում, Ռուսաստանը իւրայատուկ ձեւով իր  
դատաստանն արեց Լեհաստանի հետ, անողորմ կերպով  
ճնշեց այնտեղ ապստամբութիւնը, վերցրեց Վարչաւան  
և ձեռնարկեց Լեհաստանի երրորդ բաժանման, վերցնելով  
իրեն առիւծաբաժին: Լեհական յեղափոխականները, ո-  
րոնց ղեկավարն էր Կօսցիւչկօն, պատերազմութիւն ու-  
ղարկեցին Ֆրանսիա և խնդրեցին օգնութեան գալ: Կոն-  
վենտը պատասխանեց, որ «Ֆրանսիական հանրապետու-  
թիւնը չի մերժի օգնութեան գալ Լեհաստանին, մի պայ-  
մանով միայն, եթէ այդ օգնութիւնը ծառայի ազատու-  
թեան գործին»: Բայց Կոնվենտի պատասխանը ստացեց  
Փարիզում այն ժամանակ, երբ Կօսցիւչկօն արդէն յաղթ-  
ւած էր (1794 թ. հոկտեմբեր 10):





քանդելու ձեր շղթաները» և միևնոյն ժամանակ բանակ-  
 ցութիւններ էր վարում Իտալիայի թագաւորների հետ,  
 հաճախում պապին, որի իշխանութիւնն ատելի էր ժո-  
 ղովորին: Յրանսխայում Բօնապարտի եղբայրները, բա-  
 րեկամները և կինը արեւատօրէն նրան հռչակ էին տալիս,  
 լցնելով լրագիրները նրա քաջագործութիւնների հաղոր-  
 դութիւններով: Այն քաղաքները, որ նա զրուտում էր,  
 ենթարկւում էին բարձր տուրքերի: Գիտենալով, որ  
 ֆրանսիական կառավարութիւնը փողի մեծ կարիք ունի,  
 նա ուղարկում է կառավարութեանը 10 միլիոն և խոս-  
 տանում ղեռ ատելի ուղարկել մօտիկ ապագայում: Կառա-  
 վարութեան առանձին անգամներին և ազդեցիկ անձնա-  
 ւորութիւններին Բօնապարտը նւիրում է թանկագին  
 նկարներ, արձաններ, հազւագիւտ իրեր, որ նա կողոպ-  
 տել էր Իտալիայում: Ժողովրդային ինքնասիրութեանը  
 դուր էին գալիս օտարերկրեայ դրօշակները, աւարը և  
 դերինները, որ ուղարկւում էին Փարիզ կուռի դաշտից:  
 Աւստրիայի գէմ պատերազմի պատրուակով Բօնապարտը  
 պահում է իր ձեռքին Իտալիայի բախտը: Մենք մտա-  
 գիր չենք այս համառօտ պատմութեան մէջ կանդ առնել  
 զինւորական արչաւանքի, հազարաւոր անմեղ զինւորներ  
 սպանող այս կամ այն գեներալի հերոսական քաջագոր-  
 ծութիւնների և զգւելի արիւնալից էպիզօդները վրայ,  
 որոնք միայն պատազրկում են մարդկութեան և պատ-  
 մութեան առաջ հռչակւած հերոսներին: Կասեւք միայն,  
 որ Իտալիայում մի տարւայ պատերազմի ընթացքում  
 Բօնապարտը մի քանի խոշոր պարտութիւններ հասցրեց  
 Աւստրիային, նուճեց հիւսիսային Իտալիան, մտաւ մինչ-  
 չև Շաիրիան: 1797 թւի հոկտեմբեր 17-ին նա կամպօ-  
 Յօրմիօյում աւստրիացիներին հետ հաչտութիւն կնքեց:  
 նա ատեց Աւստրիային անկախ Վենետիկի հանրապետու-

թիւնը և միացրեց Յրանսխային Գենուան Գափնիներով  
 և փառքով ծածկւած Նապօլեօն Բօնապարտը վերադար-  
 ձաւ Փարիզ և այստեղ գտաւ իր փառասիրութիւնը բա-  
 ւարարելու հոգը:

1795 թւականի վերջին Կոնվինտը ջրեց, պար-  
 դելելով Յրանսխային պատմութեան մէջ « 3-րդ տարւայ  
 Սահմանադրութիւն» անունով յայտնի մի ուէակցիօն  
 սահմանադրութիւն: Այդ սահմանադրութեամբ մէկի փո-  
 խարէն հիմնւում են երկու պալատ: «Էլնգհարիւրի խոր-  
 հուրդ» և «Աւազների խորհուրդ»: Առաջինը օրէկներ է  
 առաջարկում երկրորդը նրանց հաստատում: Ընտրու-  
 թիւնները՝ երկատոխձան: Ընտրողական իրաւունքով օգ-  
 տւում են 21 տարին լրացրած այն քաղաքացիները,  
 որոնք մի տարի ապրել են որոշ տեղ և վճարել են հո-  
 ղային կամ անձնական հարկ, Ընտրելու իրաւունք ու-  
 նէին միայն 25 տարուց ոչ պակաս հասակ ունեցողները,  
 սեփականատէրերը: Աւազների խորհրդի անդամ կարող էր  
 լինել 40 տարին լրացրած, ամուսնացած կամ այրի ամեն  
 մի քաղաքացի: Երորձագիր իրաւունքը գտնւում էր 5  
 հոգուց բաղկացած ղիրեկտորիայի ձեռքում, որ ընտրում  
 էր աւազների խորհուրդը՝ շինգհարիւրի խորհրդի ներկայա-  
 ցրած 50 թեկնածուներից:

Ինչպէս տեսնւում ենք, նոր սահմանադրութիւնը  
 բոլորովին զրկում էր բանւորներին պետութեան կառա-  
 վարութեան մասնակցելուց, արգելւում էր օրէնսդրական  
 գործունէութիւնը երկպալատ սիստեմով, երեք կենտրո-  
 նական հաստատութիւնների մէջ կոնֆլիկտների առիթ  
 էր ստեղծում, ուժեղ իշխանութիւն էր տալիս հինգ հո-  
 ղու ձեռքը, ամեն մի փառասիրի ու աւանախրիստի  
 համար ձանապարհ էր բաց անում:

Նոր պետական կաղմը բուրժուազիայի լիզուով նշա-  
 նակում էր «Նանրապետութիւն առանց անարխիայի»:

Հանրապետութիւն՝ զա գերեկաօրիայի համարեա անսաման իշխանութիւնն էր, նրա անդամներէ անվերջ ինտորիգնները իբարձ գեմ, հասարակական փողերի վաճառուք սիրուհիներ պահելու և պաշտաներ շինելու համար, պալաններ՝ որովք ոչնչով պակաս չէին թաղապետական պալաններէց, դա—Բանապարտի անվերջ անոզ կարողութիւնն էր, նրա աւելի ու աւելի անպատկառ վերաքեր սուկըր գէպի քաղաքացիական իշխանութիւնը, բարձրագոյն իշխանութեան իրան գուր չեկամ օրէնքների և կարգադրութիւնների գոտարարար արձամարելը, մի խօսքով, հանրապետութիւն—դա այս աշխարհի ուժեղների տիրապետութիւն, հնչին սեռազի ամենազօրութիւն, սեփականութեան յախտնականութիւն և սրբութիւնն էր: Անաշխիտան—գա՝ ժողովրդի պահանջն էր 93 թւականի իտիպէս հանրապետական և դեմոկրատիկ սահմանադրութեան, ազրանների հայէ, բանտրների—աշխատանքի իբաւաւելի, ամենքի համար հասարակութեան պահանջն էր: Մենք արդէն ասացինք, որ 95 թ. ժողովրդական ապստամբութիւնից յետոյ բանտրական թաղերը զլնութեան անելուց յետոյ բաւթուագլան միայն մի ներքին թշնամի սնէր, սոյալիտաները վտանգաւոր թշնամի չէին, սրովհետև հասարակ հակառակ էին գնում, որովհետև նրա կապիտալիտական հասարակութեան հիմքերին մասնաւոր սեփականութեան չէին սպառնում, որովհետև մի ժամանակ նա նոյն իսկ օգտակար էլ էր վնում, երբ պէտք էր վնում ճնշել ծայրայեղ յեղափոխական, թշնամի տարրը:

Այն ժամանակ, երբ թուում էր, ըստը դժգոն ծայրայեղ տարրերը արդէն ընկճուած են, երբ մանր բուրձուագլան յեղափոխութիւնից յաղնած, պատրաստ էր նոր կարգի հետ հաշուելու, երբ բուրձուագլան աւելի

քան երբեք բարձրաձայն յեղափոխութիւնը վերջացած էր յայտարարում և ամբողջ աշխարհին յայտնում, թէ ահա այժմ վրայ է հասնում մարդկութեան երջանկութիւնը—հենց այդ ժամանակ մի ձայն հնչեց, «մ'չ, յեղափոխութիւնը դեռ չի վերջացել, սրովհետև հարստները բոլոր հարստութիւնը իրանց ձեռքն են առել, որ նրանք են իշխում ժողովրդի վրայ, մինչդեռ չբաւարները իրանց ամբողջ կեանքը ազրատութեան մէջ անցկացնելով և պետութեան մէջ ոչ մի նշանակութիւն չունեցած՝ և որ տերի նման աշխատում են»:

Այդ 1703 թ. տաում էր կայ-Գրակիս Բարեօֆը: Բարեօֆը ծնւել էր 1760 թ. նոյեմբերի 23-ին գաւառական մի խեղճ ընտանիքում: Նա շատ խզճուկ կերթութիւն էր ստացել և միայն կամաց կամաց ընթերցանութեամբ լրացրել էր իր կրթութիւնը: Ղեռ մանկութիւնից նա ծանօթ էր կարիքին, ուրիշների մօտ ծառայութիւն կատարելուն, կամ իբրև այս ու այն կողմ վազվզող աղայ զիւղական հողաչափի մօտ, կամ իբրև գրագիր զանազան կալածատէրերի մօտ: Խելզ էր, ուշիմ միկնոյն ժամանակ մարդասէր՝ շուտով նա սկսեց նկատել զիւղացու կեանքի ծանրութիւնը, վրդովել նրան ազնւականութեան և հոգևորականութեան կողմից բանտուց կերպով շահագործելուց: Իսկան տարեկան հասակում գրկեց հօրից. 1782 թ. ամուսնացաւ և շուտով ստիպւած էր ոչ միայն կնշ և իր երկու երեխաների, այլև մօրը, քոյրերի և եղբայրների համար ապրուստի միջոցներ ձարելու: Հողաչափի պաշտօն ստաբուսով նա լաւ ծանօթացաւ այն փաստաթղթերի հետ, որոնք վերաբերում էին հողային սեփականութեան բաշխմանը և պարզ ցոյց էին տալիս նրան, թէ ինչպէս է Ղեկուած բնակչութեան խոշոր մասը: Իր 1879 թ. լոյս

տեսած առաջին շարադրութեան մէջ արդէն նա աշխատում է համեմուտ «ժողովրդի ընդհանուր բազմաբութեան» միջոցներին, ուսումնասիրում է բանւորների դրութիւնը: Բաստիլիայի անկումը նրան Փարիզ է զբրաւում, որտեղ նա բոլոր ժողովրդի հետ միասին տօնում է ազատութեան չրջանի վրայ համեմուտ: Փարիզում ոչ մի ծանօթութիւն չունենալով, ղեւարութեամբ ապրուստի միջոցներ ձարելով, նա իր զաւառն է վերադառնում: Այստեղ նա օդոստատի 4-ի դիշերից յետոյ կռիւ է սկսում բոլոր այն աստիճանաւորների, զատաւորների և ազնւականների դէմ, որոնք զիւզացոց տղատութիւնից օգտւելով առաջւայ նման շարունակում էին բնակչութիւնը կեղեքել: Բարէօֆի կռիւը «այս աշխարհի ուժեղներից» բազմաթիւ անձնական թշնամիներ առաջացրեց: Այդ ժամանակից Բարէօֆի համար սկսւում է բանալից բանա քարը դալը: Սկզբից նրան դատում և ձերբակալում են նրա համար, որ դրդւում է զիւզացոց հրաժարել վճարելուց հարկերը, որ նրա կարծիքով պիտի հարուստները միայն վճարէին: Մարտը սրաշտպանում է Բարէօֆին, որին և շուտով արձակում են բանտից, սակայն նրա թշնամիները չեն հանդատանում: 1791 թ. Բարէօֆը իբրև առաջիններից մէկը պահանջում է հանրապետութիւն և ընդհանուր ձայնաւորութիւն. միևնոյն ժամանակ նա արտայայտւում է և «ազրարային օրէնք»ի մասին, այսինքն հողատիրութեան մէջ հաւասարութիւն: Իր զաւառում ծայրայեղ ժողովրդապանութիւն վայելելով՝ 1799 թ. սեպտեմբերին նա վարչական ղեկարատմանտի անդամ է ընտրւում:

Նոյն տարւայ վերջին Բարէօֆի թշնամիները, իսկ նրանց մէջ կար նաև ակզի դատախազը, նրա դէմ գործ սկսեցին նրան կեղծիքի մէջ մեղադրելով, որ ոչ այլ

ինչ էր, եթէ ոչ մի հասարակ սխալ, որ Բարէօֆը արել էր մի գնման թուղթ կաղմելիս, և իսկոյն եկեթ ուղղել: Բարէօֆին ձերբակալում են և նա բանտ է նստում մօտ մի տարի: Տերմիդորի 9-ից մի շաբաթ առաջ նրան բաց թողին:

Բարէօֆը Ռորէսպիերի հակառակորդն էր, երբ վերջինս հասաւ իր ամենակարող ուժի գաղաթնակէտին, նա Ռորէսպիերին մեղադրում էր դէպի դիկտատուրա ձգտման, աննպատակ սպանութիւնների, «անկաշառի» կռիւ բացառիկ միջոցների դիմելու մէջ: Իդէալիստ Բարէօֆը չէր ճանաչում պետական այնպիսի հասկացողութիւններ, որոնց դո՛ւ էին բերում սկզբունքներ: Նա յարձակւում էր «անկաշառի» վրայ վերջինիս խօսքի ազատութեան սահմանափակելուն համար, թէև այդ սահմանափակումը տարածւում էր միայն ուսուցիչներին և չափաւոր հանրապետականների վրայ, նոյնպէս նրա համար, որ պետութեան կառավարութեանը փաստօրէն ոչ թէ ամբողջ ժողովուրդն էր՝ մասնակցում, այլ նրա ընտրած տարրերը, լինին թէկուզ ամենաշուրջած հանրապետականները, վերջապէս նրա համար, որ Ռորէսպիերը 93, թ. սահմանադրութեան գործադրութիւնը սպառաշի յեաւձգեց: Բարէօֆը նրանում հիասթափւած բռնակալ, մարդասպան էր անւանում նրան: Եակոբինցիների ակումբին էլ նոյնպէս բացաւար էր վերաբերւում Բարէօֆը: Տերմիդորի 9-ից յետոյ Բարէօֆը Փարիզում հիմնում է այսպէս կոչւած «Ընտրողական Ակումբը», որը խօսքի, մամուլի լիակատար ազատութիւն և 93 թ. ապրիլի սահմանադրութիւն է պահանջում հոմոլինտից: Միևնոյն ժամանակ Բարէօֆը սկսում է «Մամուլի Ազատութեան Լրագիրը» հրատարակել, որին իբրև էպիգրամի ծառայում էր «Իրաւունք»

ների դեկլարացիան, ազատականութեան նպատակը—  
 ընդհանուր բախան էս յօդածը: Տերմիզորի Թ-ին յա-  
 ջորդող ունեցիական շինարարաց ոչ Բարեօֆին, ոչ եակո-  
 բինցիներին: Երկու ակումբներն էլ համարեա միաժա-  
 մանակ ժողովներն, իսկ Բարեօֆը կանվենտի վրայ յար-  
 ձակելուն համար բանասերիսց, արդէն այդ ժամա-  
 նակներն էր, որ այդ եռանդոտ պայքարողի մէջ սկսել էր  
 մշակել դասակարգային կաւի պարզ գիտակցութիւնը:  
 Նա տեսնում էր վերջին ժողովրդական ապստամբու-  
 թեան արդիւնքները, տեսնում էր, ինչպէս ամբողջ բուր-  
 ժուադրան՝ ուսուցիչներն ու հանրապետականները  
 միանում էին բանւոր դասակարգը ճնշելու և հարստա-  
 հարելու համար: ՁԱՅԺ, գրում էր նա, գոյութիւն ու-  
 նեն երկու կուսակցութիւններ, որոնք երկուսն էլ ցան-  
 կանում են հանրապետութիւն, մէկ կուսակցութիւնը  
 ցանկանում է բուրժուական և արիստոկրատական հան-  
 րապետութիւն, միւրը՝ ժողովրդական և դեմոկրատիկ:  
 Այդ ժամանակ Բարեօֆը ժողովրդին հրաւիրում էր միայն  
 խազաղ մանիֆեստացիաների զիմելու, բայց հենց այդ  
 առիթ աւելց կանվենտին նրան երկրորդ անգամ ձեռքա-  
 կալելու «ժողովրդին ապստամբութեան հրաւիրելուն»  
 համար: Ռոյալիստական ապստամբութիւնից յետոյ  
 յայտարարւած ընդհանուր ամենախիտ բաց արաւ Բա-  
 րեօֆի համար բանտի դռները: Նրա լրագիրը շարուն-  
 նակում էր լոյս տեսնել, բայց արդէն «ժողովրդական»  
 ծրրբուն» անունով: Նոր կառավարութիւնը, Դիքեհուս-  
 րիան, ղլխաւորապէս արտօնեալ դասակարգի շահերի  
 պաշտպանութեամբ էր զբաղւած: Բանւորների և տերերի  
 մէջ ժողով մեծերի ժամանակ նա միշտ վերջինների կողմն  
 էր պաշտպանում: Անհրաժեշտ միջոցների մաքսիմալ գննի  
 վերացումը, ինչպէս վերնում յիշեցինք, առաջացրեց նը-

րանց թանգանալը, մինչդեռ աշխատավարձը ընկնում  
 էր, իսկ այդ անկումը Փարիզում մի շարք խոշոր գոր-  
 ծադուներ առաջ բերեց: Ռափիկանութիւնը ուժով էր  
 ստիպում բանւորներին նորից աշխատանք սկսելու,  
 որում էր գործադուլ անողների ժողովները նրանց տեղ  
 դիմորներ էր դնում: Բանւորները մէկ պահանջում էին  
 աշխատավարձի աւելացում, մէկ ուրիշի վճարումը ոչ  
 թէ ասօրհնաանելով\*) այլ հնչյուն մետաղ զրամով:

Այդ բոլոր անցքերի ազդեցութեան առկ Բարեօֆի  
 դժարինան որոշ կոմունիստական բնոյթ ընդունեց:  
 Նա արդէն չէր պաշտպանում «ազդեցային օրէնքները»,  
 չէր պահանջում ճողատիրութեան մէջ հաւատարմութիւն,  
 նա աւելի հեռուն գնաց և պահանջում էր մասնաւոր  
 սեփականութեան ոչնչացումը, «Հասարակութեան մէջ  
 դրում էր նա, լինելու չեն ոչ հարուստներ, ոչ աղ-  
 քասներ: Հողի և արտադրութեան գործիքների սեփա-  
 կանութեան իրաւունքը մասնաւոր անհատներից պե-  
 աութեան պէտք է անցնի: Հասարակութիւնը պէտք է  
 այնպէս կազմւած լինի, որ ոչ ոք հնարաւորութիւն  
 չունենայ մտացած շրջադարձներից ոչ աւելի հարուստ,  
 ոչ աւելի ուժեղ, ոչ աւելի ազդեցիկ դառնալու: Բոլորը  
 միատեսակ պէտք է աշխատեն և վայելեն իրենց աշ-  
 խատանքի արդիւնքները»:

Բարեօֆի դաշտիպանները ամենակենդանի արձա-  
 գանքն էին գտնում Սենտ-Մարտան և Սեն-Մարտ  
 արարձանների բանւորների կողմից: 1795 թ. ժողո-  
 վրդական բացարձակ ապստամբութեան անյաջողու-  
 թիւնը Բարեօֆին գաղտնի դաւադրութեան միջոցով,  
 համախոհների ապստամբութիւն պատրաստելու, իշխա-

\*) 100 ֆրանգանոց ասօրհնաան արժէքը այդ ժամանակ  
 10 սանտիմի էր համարում:

նութիւնը դրակելու և իր քաղաքական անսեռական ծը-  
 րագիրը իրագործելու միտքը ներշնչեց: Մարտի սկզբին  
 Բարէօֆին ու իր երկու մտերիմներ՝ Սիլվէն Մարէշալը  
 և Ֆեկլըս Լէպլեաիէն կազմում են գաղտնի ինսուր-  
 րեկցիօն կոմիտէ: Նրանց շատով միացան Անտօնկը,  
 Ռօսսինկօյը, Բուճարօստին, Դիդիէն, Դարտէն, Կոմի-  
 տէն իրան «Գաղտնի Դիրեկտօրիա» անունը տւեց, իսկ  
 նրա շուրջը հաւաքւած ընկերութեանը՝ «Հաւասարների  
 Լիգա»: Փարիզի 12 չրջաններից իւրաքանչիւրի մէջ  
 կոմիտէն ունէր իր ազենտը, որ պրոպագանդայով էր  
 պարապում, ժողովներ էր կազմում, համախոհներին էր  
 կազմակերպում: Իր դօկտրինան և իր ծրագիրը ժողո-  
 վրդականացնելու նպատակով «Հաւասարների Լիգան»  
 հրատարակեց և տարածեց ժողովրդի մէջ «Հաւասար-  
 ների Մանիֆեստը» և «Ժողովրդական Տրիբուն» Բարէօ-  
 ֆի դօկտրինայի անալիզը: Նրանց խոշոր նշանակու-  
 թիւնը ի նկատի առնելով, մենք համարեաւ ածողջօվին  
 մէջ ենք բերում այդ դժուարեանները, բաց թողնելով  
 այն կտորները միայն, որոնք այժմ առանձին հետա-  
 քրքրութիւն չեն առաջացնում:

**ՀԱՒԱՍԱՐՆԵՐԻ ՄԱՆԻՖԵՍՏ,**

«Փրանսիայի Ժողովուրդ:  
 «Տասնեկինգ դարերի ընթացքում դու ապրել ես  
 իբրև ճորտ, ուրեմն և անբաղդ: Միայն լից տարի է  
 անցել այն օրից, երբ դու անկախութեան բաղձաւորու-  
 թեան և հաւասարութեան սպասելով ազատ շնչեցիր:  
 «Հաւասարութիւն, Բնութեան առաջին պահանջն  
 է: Մարդկութեան առաջին պիտոյքն ու ամեն մի խե-  
 լացի միութեան հիմնական սկզբունքը: Փրանսիացի  
 Ժողովուրդ, դու լաւ չէիր օժտւած ուրիշ ազգիւրից,

որոնք այս դժբաղդ երկբազնդիս վրայ քարշ են տալիս  
 իրանց գոյութիւնը: Ամեն ժամանակ և ամեն տեղ  
 մարդկային գժբաղդ ցեղը—աւելի կամ պակաս ճար-  
 պիկ մարդակերներ յայդ սրբը, ծառայում էր իբրև  
 խաղալիք ամեն տեսակ փառասիրութեան, իբրև սնունդ  
 ամեն ձեռ բռնակալութեան: Միշտ և ամեն տեղ մարդ-  
 կանց քնացրել են կարմիր խօսքերով, և ոչ մի տեղ  
 խօսքերին գործ չի հետեւել: Ամենահին ժամանակներից  
 ոչլսած կեղծաւորաբար կրկնում են թէ մարդիկ հաւա-  
 սար են և ամենահին ժամանակներից սկսած մարդ-  
 կային ցեղը ճնշւում է ամենաստորացողիչ անհաւա-  
 սարութեան տակ: Բաղաքական հասարակութիւնների  
 գոյութիւն ունենալու օրից սկսած մարդուն միաբերան  
 ամենալաւ վիճակ են խոստանում, բայց մինչև այժմ  
 էլ դեռ այդ գոյութիւն չէ ստացել ոչ մի անգամ: Հա-  
 ւասարութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ օրէնքի գեղե-  
 ցիկ և տնայտուղ ֆիկցիա: Եւ այժմ երբ այդ աւելի  
 հաստատակամութեամբ ենք պահանջում, մեզ պատաս-  
 խանում են՝ լուցէ՛ք, դժբախտներ, Փաստացի հաւա-  
 սարութիւնը միայն մի ցնորք է, բաւականացէք պայ-  
 մանակաւ հաւասարութեամբ: օրէնքի առաջ դուք բո-  
 ւորդ էլ հաւասար էք: Ել ի՞նչ էք ուզում, սրիկանի՛ր:  
 Ել ի՞նչ է պէտք ձեզ: Դէ լսեցէ՛ք դուք ուրեմն օրէնս-  
 դիրներ, կտոավարիչներ, հարուստ սեփականատէրեր,  
 «Մենք բոլորս հաւասար ենք, ճիշտ չէ՞: Այդ ան-  
 վիճելի է մնում, որովհետև յիմար պէտք է լինել պնդե-  
 լու համար՝ թէ ցերեկը գիշեր է:  
 «Այսպէստև մենք կամենում ենք ապրել և մեռնել  
 նոյնպէս հաւասար, ինչպէս ծնւել ենք, մենք ցանկա-  
 նում ենք իսկական ազատութիւն կամ մահ: Ահա՛ թէ  
 ինչ ենք ուզում մենք: Եւ մենք ինչ էլ լինի ձեռք

կրեցենք այդ հաւասարութիւնը: Վա՛յ նրանց, որոնք կէփանալեն մեր և նրա մէջ. Վա՛յ նրանց, որոնք կփորձեն այդ պարզ արտայայտւած ցանկութեան հակառակելու: «Ծրանսիական այս յիզափոխութիւնը նախորդն է ուրիշ աւելի մեծ, աւելի հանդիսաւոր յիզափոխութեան, որ վերջինը կլինի:

«Ժողովուրդը արտրեց իր սաների տակ թագաւորներին ու քահանաներին, որոնք միացած էին նրա դէմ: Նա նոյնպէս կվարդի հներից աջ նստած նոր բանակահների, նոր քաղաքական տարախֆների հետ:

Իրաւունքների հաւասարութիւնից զատ էլ ի՞նչ է մեզ պէտք:

«Մեզ պէտք է ոչ թէ միայն «Մարդու և քաղաքացու իրաւունքների գեկլարացիայի» մէջ գրած հաւասարութիւնը, այլ մեզ պէտք է հաւասարութիւն մեր շրջանում, մեր տների կտուրների տակ...»

«Օրինադիրների և կառավարիչների, որոնք նոյնքան քիչ խելք ունեն որքան և բարի կամք, և դուք, հարուստներ, անխիղճ սեփականատէրեր, իդուր էք աշխատում թուրացնել մեր սուրբ ձեռնարկութիւնը, մեր մասին ասելով՝ նրանք կամենում են ստեղծել լոկ ազրաբային օրէնքը, որ նրանցից առաջ այնքան պահանջում էին:

«Ուրեմն, լուրջէ՛ք, դուք, բաժնատողներ, և լուսամօթիւսածութեամբ լսեցէք մեր պահանջները, որոնք ընտրութիւնից են թելադրւած և հիմնւած են ճշմարտութեան վրայ:

«Ազրաբային օրէնքը, կամ հողամասերի բաշխումը մի քանի անակգրուէք դիմւորների, մի քանի աւելի բնադրով քան խելքով առաջնորդող խմբակների տարերային պահանջն էր: Մենք աւելի բարձր և աւելի

արդար բանի ենք ձգտում—համայնական սեփականութեան և բարեբեքերի ընդհանրացման:

«Պէտք է ալ ևս հողի մասնաւոր սեփականութիւնը: Հողը ոչ ոքին չի պատկանում: Մենք պահարջում ենք, մեք կամենում ենք հողի արդիւնքից օգուեն բոլորը, հողի արտադրութիւնը պատկանում է բոլորին:

«Մենք յայտարարում ենք, որ այսուհետև էլ չենք թող տայ որ մարդկանց ահազին մեծամասնութիւնը աշխատի իր քրտինքով աննշան փոքրամասնութեան օգտի և բաւականութեան համար:

«Արդէն չափազանց շատ ժամանակ է անցել այն օրից, երբ մի միլիոնի չափ մարդիկ կարգադրում են այն ամենը, ինչ որ պատկանում է քսան միլիոն նրանց մօտիկներին, նրանց հաւասարներին:

«Թող վերջանայ ուրեմն, վերջապէս, այդպիսի անճոռնի կարգը, որի երբեմնի զոյաթեանը չեն հաւատայ մեր թռուները:

«Թող ոչնչանայ վերջապէս, հարուստների և աղքատների, մեծերի և փոքրերի, տէրերի և սպասարների, կառավարիչների և կառավարողների այդ քսանմիլի տարբերութիւնը:

«Ծրանսիական ժողովուրդ.

«Մենք քեզ ասում ենք, այն սուրբ դորձը, որ մենք ձեռնարկում ենք, մի նպատակ ոչնի միայն—վերջ դնել քաղաքական վէճերին և հասարակական աղքատութեանը:

«Իե՛ս կրեք աւելի մեծ ծրագիր չէր մտածւած և պտտրաստւած իրազործելու համար: Միայն առանձին հանձնարեզ անհատներ, առանձին իմաստուններ, ժա-

մանակ առ ժամանակ ամուսն էին այդ մասին թող և  
զողողուն ձայնով, նրանցից ոչ ոք ըաջութիւն չէր  
խունցել ըստը ճշմարտութիւնը իր ամբողջութեամբ  
այտնելու:

Վճռական միջոցների բռնկն հասել է: Չարու-  
թիւնը իր գաղաթնակէտին է հասել: Նա տարածւած է  
ամբողջ երկրի երեսին: Բաղաքականութիւն անունով  
ըստը չափազանց երկար դարեր է թաղալորում: Թող  
ուրիմն հաստատուի կարգը, թող ամեն բան բանի իր  
տեղը: Թող հաւասարութեան հրաւերով կազմակերպւեն  
արգարութեան և ըզգաւորութեան բոլոր տարրերը:  
Հասել է սահմանելու ժամանակը հաւասարների հան-  
րապետութեան այդ՝ բոլորի համար միատեսակ, բայց  
մեծ ապաստարանը: Ընդհանուր վրդովմունքի օրերը  
եկել են: Դուք բոլոր ճնշածներ՝ եկէք ձեր ընտանիք-  
ներիով ընտեթեան իր բոլոր զաւակների համար կա-  
ռուցած ընդհանուր սեղանին . . . . .

«Յրանսխական ժողովուրդ:

«Ի՞նչ սահմանադրութիւն պիտի բաւարարէ քեզ՝  
Դու կարող ես ընդունել միայն այնպիսի սահմանա-  
դրութիւն, որը ամբողջապէս հիմնւած է իրական հա-  
ւասարութեան վրայ և որը կարող է քո պահանջները  
բաւարարել:

«1791 և 1795 թւականներին արխատկրատական  
խարտիաները միայն աւելի ամբացրին քո շղթաները  
փոխանակ նրանց շարգելու: 1793 թ. խարտիան մի  
մեծ բայլ էր դէպի ճշմարիտ հաւասարութիւնը: Դիտ-  
երբէք այդքան չէինք մտնեցած նրան, բայց այդ  
խարտիան այնուամենայնիւ նպատակին չհասաւ, չհաս-  
տատեց ընդհանրութեան բաղդը, թէև նրա մեծ սկզբ-  
բունքը հանդիսաւորապէս ճանաչում էր:

«Յրանսխական ժողովուրդ:  
«Բաց քո աչքերը և սիրտը լիակատար բաղդա-  
ւորութեան մտախիւթեան հանդէպ: Ընդունիր և յայ-  
տարարիր մեզ հետ միասին հաւասարների հանրապե-  
տութիւնը»:

«Բարէօֆի զոկարինայի անալիզը» իր մէջ մի  
շարք յօդւածներում պարունակում է «Հաւասարների  
իզգայի» հիմնական սկզբունքները.

- «1. Բնութիւնը ամեն մի մարդու տեղ է բոլոր  
բարիքներից օգտուելու միատեսակ իրաւունք:
- «2. Հասարակութեան նպատակն է՝ պաշտպանել  
այդ հաւասարութիւնը և բոլորի աշխատակցութեամբ  
աւելացնել հասարակական բարիքների գումարը:
- «3. Բնութիւնը պարտադրում է իւրաքանչիւր  
մարդու աշխատել, ոչ ոք չի կարող առանց յանցանք  
զործած լինելու աշխատանքից՝ խուսափել:
- «4. Աշխատանքը և աշխատանքի արդիւնքը պէտք  
է համայնական լինեն:
- «5. Հարստահարութիւն է երբ մէկը աշխատան-  
քով իրան քայքայում է և ամեն բանի կարիք է դրում,  
իսկ միւսը՝ ոչինչ չանելով առատութեան մէջ է սուր-  
բում:
- «6. Ոչ ոք առանց յանցանք զործած լինելու չի  
կարող սեփականացնել միայն իրեն հողի և արդիւնա-  
բերութեան բարիքները:
- «7. Իսկական հասարակութեան մէջ լինելու չեն  
ոչ հարուստներ, ոչ աղքատներ:
- «8. Հարուստները որոնք չեն կամենում հրաժար-  
ւել յօդուտ չբաւորների իրանց յաւելածքից՝ ժողովրդի  
թշնամիներն են:
- «9. Ոչ ոք, իւրացնելով բոլոր միջոցները, չի կա-



րոզ գրկել ուրիշին չազգաւորութեան համար անհրա-  
ժեշտ կրթութիւնից, կրթութիւնը պէտք է ընդհանուր  
լինի:

«10. Յեղափոխութեան նպատակն է՝ ոչնչացնել  
անհաւասարութիւնը և սանձանել ընդհանուրի բազմա-  
ւորութիւնը:

«11. Յեղափոխութիւնը վերջացած չէ, որովհե-  
տե հարուստները գրաւում են բոլոր բարեքնները և  
կառավարում ժողովուրդը, մինչդեռ չքաւորները խնայ-  
կան ճօրտերի նման աշխատում են, աղքատութեան  
մէջ տուտապում և պետութեան մէջ ոչ մի նշանակու-  
թիւն չունեն:

«12. 93 թւականի սանձանագրութիւնը Ֆրանսի-  
ացիներին ճշմարիտ օրէնքն է, որովհետեւ ժողովուրդը  
հանդիսաւոր կերպով նրան իր օտանկցեան է տուել:

«Հաւասարների լիդային» կոմիտէն, ինչպէս գրում  
էր Բուօնաբուատին, «պարեհաբանների, հաւասարութեան  
պար միակ պաշտպանների ետանդի վրայ էր» յայտը  
գրել: Ամբողջ գործարաններ և արհեստանոցներ Բա-  
րեօֆի կողմնակիցներից էին բաղկացած: Կոմիտէն մի-  
անոյն ժամանակ ուժեղ պրոպագանդ էր մղում և զին-  
ւորների մէջ: Բնակիչներին զինաթափ անելուց յետոյ  
գորքն էր մնում միակ կազմակերպած ոյժը: «Ժողով-  
վրդական տրիբունն» մէջ զինւորներին զինելով՝ Բա-  
րեօֆը գրում էր.

«Ինչքան ժողովուրդից էր դուրս հկած, և ձեզ, հան-  
րապետութեան զինւորներին ժողովրդի միւս մասի զեմ  
են ուղարկում: Ո՛չ: Ինչքան ժողովրդի, ուրիշն և ձեր  
թշնամբների խզձուկ աշխատակիցները և նրանց ձեռ-  
բում անգութ գործիք դառնալ չէք կարող: Փօքը առ  
վազը «Հաւասարների լիդային» սկսեցին միմեայ կա-

կարկնելին ու մտաւանաւորները, որոնք միայն 93 թւա-  
կանի սանձանագրութեան էին պահանջում և ոչ բոլոր-  
ընդունում էին Բարեօֆի սնտեսական ծրագիրը:  
Մայիսի 8-ին վերջնականապէս մշակւած էր ապստամ-  
բութեան ծրագիրը: Կառավարութեան ականջին հասնել  
էր պատրաստուող ապստամբութեան լուրը: Ինտուր-  
չրէկիցիօն կոմիտէն մտել էր լրտես Իրիպէլ սալան, որ  
կոմիտէի պարագլուխների մօտին մանրամասն հա-  
ղորդում էր Իրիպետրային: Երբ մայիսի 10-ին կոմի-  
տէի բոլոր անդամները հաւաքւել էին ապստամբու-  
թեան վերաբերմամբ վերջին միջոցները ձեռք առնե-  
լու, ոտականութիւնը ներս խուժեց ժողովի սենեակը  
և ձերբակալեց բոլոր դաւադիրներին: Իրիպետրային  
օգուտեց հանգամանքից և քիչ թէ շատ յայտնի ծայրա-  
յեղ հանրապետականների շրջաններում մատուցական  
ձերբակալութիւններ կատարեց: «Հաւասարների» դատը  
կայացաւ Վանդում քաղաքում գործի, մէջ մասնակցում  
էին 65 հոգի, որոնք մեղադրոււմ էին հանրապետու-  
թեան, կառավարութեան և 3 տարւայ սանձանագրու-  
թեան դէմ դաւադրութիւն կազմելու մէջը:

97 թ. մայիսի 26-ի առաւօտը կայացաւ դատա-  
վէճիսը: Բարեօֆը և Դարտէն մահան էին դատապար-  
տւած, միւսները աքսորի և աւելի կամ պակաս  
ժամանակով քանդարկութեան: Իւստալճիոը յայտարար-  
ւելուս պէս Բարեօֆն ու Դարտէն փորձում են ինքնա-  
սպանութեամբ վերջացնել, սակայն վիրաւորում են  
միայն: Հետեւեալ օրը երկուսն էլ ապանւեցին:

Բարժուական թերթերը հրճւում էին: Հասարա-  
կութիւնն ու սեփականութիւնն փրկւած էին: Տիրող  
դատակարգին թոււմ էր, թէ կապիտալիստական կար-  
գերի զեմ ապստամբութեան ամեն մի փորձ, պրոլե-

տարններէ առկի լաւ ապագայի, կամ մունխտական համայնքի ամեն մի ձգտում վերջնականապէս խեղճեց Բարէօֆի արեան մէջ: Բարժուազիան այդ դաւապրութեան մէջ անհնում էր միայն վերջին արձագանքը այն յեղափոխութեան, որը լիկվիզացիայի չէր ենթարկուում, որը իր մէջ ապագայի սաղմերն էր կրում: Բարժուազիան Բարէօֆի մէջ տեսնում էր միայն 93 թւականի ժառանգին և չէր հասկանում նրա մարդարեական խօսքերը, որոնցով նա ապագայի վարադոյնն էր վերացնում:

Բարէօֆը դիտակցում էր, որ բուրժուական յեղափոխութեան վախճանը միևնոյն ժամանակ և պրոլետարական յեղափոխութեան սկիզբն է հանդիսանում, և որ այսուհետև կսիւր պէտք է վարել ոչ թէ ազնականութեան և «երրորդ» դասի մէջ, այլ հարուստների ինչ դասի էլ պատկանելու լինեն նրանք, և չբաւորների. նա արդէն գրում էր, որ բուրժուական կամեանում է պփնդանել երկու դասակարգ՝ պատրիցիների և պրեբյետների, մինչդեռ կամ մունխտները ձգտում են դասակարգերի ոչնչացմանը, բոլորի լիակատար հաւասարութեանը:

«Հաւասարների» դաւադրութիւնը, եթէ Գրիգելը նոյն իսկ չմտնէր դաւադիրներին, միևնոյնն է յաջողւելու չէր XVIII դարի վերջին: Դեռ չկային Բարէօֆի գողափարսները իրազարծելու նիւթական պայմանները: Կապիտալիզմը դեռ չէր սկսել զարգանալ. խոշոր գործարաններում և ֆաբրիկաներում դեռ խմբած պրոլետարիատ, ինչպէս այժմ տեսնում ենք, չկար. պրոլետարիատի և բուրժուազիայի միջև նոր սկսւող դասակարգային կռիւը դեռ չէր կարող զարգացնել բանւորի մէջ դասակարգային ինքնադիտակցութիւնը: Դեռ ոչ

կապիտալի կենդրոնացում կար քչերի ձեւերն, ոչ արտադրող ոյժերի: Մանր հողային սեփականութիւնը և առևտրա-արդիւնաբերական բուրժուազիան իրանց մեղրամիտն էին ապրում:

Մայիսին մեռաւ Բարէօֆը, որ կապիտալիզմի լծից ամբողջ մարդկութիւնը ազատելու համար էր կուում, իսկ մի քանի ամսից Իրիկատրիան հանդէսաւոր ընդունելութիւն էր կազմակերպում Նապոլէօն Բոնապարտին, որ ամբողջ մարդկութիւնը կապիտալիզմի լուծին հպատակեցնելու օգտին կռիւ մղելուն համար տախնիկներ էր վաստակում: Մէկը եղբայրութեան ժամին էր երազում և աղքատ մեռաւ, միւսը ձգտում էր բոլոր սղղերի ստրկացմանը և իր ձեռքն էր հաւաքում ոսկին ու հարստութիւնը. մէկը էր ձրտումների համար կախաղան բարձրացաւ, միւսը՝ դան. առաջինի անունը մարդկութեան խոշոր մասը՝ բոլոր ձեռքածները, անարդւածները և տասապրոզները օրհնում է, երկրորդի անունը ամբողջ մարդկութիւնը անխճում է:

Նոյն իսկ բուրժուազիան վախճում էր Բոնապարտից. Իրիկատրիան կասկածով էր վերաբերում երիտաւարը զենեկալին, որի փառքը ոչ թէ օրերով, այլ ժամերով էր աճում, նրա հեղինակաւոր ոճին, նրա ժողովրդականութեանը, նրա թոռայի կերպով արած նկատողութիւններին, «թէ Չրանսիայի քաղաքական հաստատութիւնները պէտք էր փոփոխել»: Բայց Բոնապարտը դեռ բոլորի համար հանելուկ էր: Եակոբինները անվիճելի աւետների հիման վրայ պնդում էին, թէ Բոնապարտը իրանց մարդն է, որ նա պատրաստում է վերադարձ դէպի 93 թիւը. ոռյեալիտանները ոչ պակաս անվիճելի աւետների հիման վրայ պնդում էին, թէ Բոնապարտը իրանց է պատկանում, որ նա բարբոն

ների ցեղի թաղաւորութիւնը վերականգնելու Եօզաին է աշխատում: Աւանախրիստին ձեռնտու էր իրանից սֆինկա ձեացնելը, երկու իրար հակառակ կուտակցութիւններին յուսադրելը: Դիրեկտորիան այդ գիտէր և ձգտում էր անյարմար Բոնապարտին Փրանսիայից հեռացնել: Փրանսիայից հեռանալը և Բոնապարտի շահերին էր համապատասխանում:

Փրանսիայից հեռու լինել, կուտակցական վեճերին չխտանել, որպէսզի իրան չանւանարկի, Դիրեկտորիային աւելի և աւելի հակաժողովրդական դառնալու հնարաւորութիւն տալ և սպասել յարմար բուպէի, երբ հնարաւոր կլինի հանդէս դալ իբրև ամբողջ Փրանսիային պէտք մարդ, իբրև նրան անարխիայից ազատող, նրա վիճակը կարգադրող՝ այդ էր Բոնապարտի նպատակը:

Աւստրիայի հետ հաշտութիւն կնքելուց յետոյ, Փրանսիային մի թշնամի էր միայն մտում՝ Անգլիան: Ի՞նչպէս ընկճել այդ հարուստ, ամենազօրեղ նաւատորմիդ ունեցող երկիրը: Իրլանդիան, որին Անգլիան ձնշում էր, վրդովում էր, անկախութեան համար էր կուում: Փրանսիան վճռում է օգնել Իրլանդիային, որպէսզի թշնամուն իր տան մէջ թուլացնի: Ծովային էկսպեդիցիա է կազմակերպում գեներալ Օշմի դիւաւորութեամբ, բայց նախ քան էկսպեդիցիան Իրլանդիա հասնելը, այնտեղ ապստամբութիւնը արդէն ընկճւած էր:

Անգլիայի հարստութեան գլխաւոր աղբիւրը նրա գաղութներն էին, մանաւանդ Հնդկաստանը: Բոնապարտը առաջարկում է նւաճել Եգիպտոսը, որ Տաճկաստանին էր պատկանում, որպէսզի այնտեղից յարստութեան մէջ մտնեն հնդկիները հետ և նրանց

չարեն մետրոպոլիայի դէմ: Բոնապարտը ձգտում էր կուրացնել ժամանակակիցներին Արեւելքում իր քաջազործութիւններով:

Ձիւնուրներին նա ասում էր. «Չեզնից ամեն մէկը Եգիպտոսից վերադառնալով, հնարաւորութիւն կուենայ վեց արպան») հող դնելու»: Եգիպտական էկսպեդիցիային մասնակցում էին այն ժամանակայ յայտնի գիտնականներ, որոնք Արեւելք էին գնում հին Եգիպտոսի յիշատակարաններն ուսումնասիրելու նպատակով: Նապոլէօնը մի շարք յաղթութիւններ տարու այնտեղ, մի քանի խոշոր քաղաքներ գրաւեց. դրանց թուում և կահիրէն: Բայց անգլիացիք Ալուէկիրում խորտակեցին Փրանսիական էսկադրան և Նապոլէօնի զօրքը Եգիպտոսում փակւած մնաց: Անգլիական կառավարութիւնը միաժամանակ իր վրայ վերցրեց Փրանսիայի դէմ երկրորդ կօալիցիան կազմակերպելու խնդրատիւր: Կօալիցիայի մէջ մասն Աւստրիան և Ռուսաստանը: Սուվորովին յաջողեց ըջել Փրանսիական զօրքերը Իտալիայից: Այդ բանն իմանալով, Բոնապարտը թողնում է իր զօրքը Եգիպտոսում և ինքը, չնայելով անգլիացիների ձեռքը գերի ընկնելու իրեն սպառնացող վտանգին. վերադառնում է Փրանսիա. թէև գեներալ Մասսենան թշնամու միացած զօրքերի դէմ Տիւրիխի մօտ յաղթութիւն է տանում, այնուամենայնիւ Փրանսիայում ոգևորութեամբ դիմաւորում են Նապոլէօնին, իբրև կօալիցիային հարւած տալու ընդունակ միակ գեներալին: Եգիպտական էկսպեդիցիան աւելի ևս մեծացրեց Բոնապարտի ժողովրդականութիւնը: Նրա կնոջ և կղբայրների խնտրիգները պետական յեղաշրջման հող էին պատրաստում: Միև-

\*) Արպան՝ հողի օրավարն է, չափը:

նայն ժամանակ և Իբրեկոսորիան իր դէմ էր շարունակ և բռնալիստներին, որոնց յոյսը նա չարգարացրեց, և դեմոկրատ-հանրապետականներին, որոնց նա հաշտեց և կարգեց: Իբրեկոսորիայի անդամները իրար թշնամաբար էին վերաբերում: Կառավարչական մեքենան կանգ էր առել. Ֆրանսիան ոչ առաջ էր կարողանում շարժել ոչ յետ նահանջել: Բուրժուազիայի չափաւոր թիւը, բոլոր ազգային հողերի սեփականատէրերը, պատերազմի շարունակելուց դժգոհ էին, վաղւայ օրից էին վախենում: Իսկ Նապոլէօնը խոստանում էր խաղաղութիւն, ընդհանուր ձայնատուութեան վերականգնում, հարուստ աւար: Նա որոշեց մի անդամից մի եռանգուն ակտով վերջացնել հաշիւները III տարւայ սահմանադրութեան հետ, իշխանութիւնը իր ձեռքն առնել, իրեն դէպի դահ ուղի հարթել:

Յակոբինների դաւադրութեան պատրւակով երկու պալատներն էլ Փարիզի մօտ Սեն-Կլու տեղափոխւեցին և Նապոլէօնի զինւած պահպանութեան տակ դրեցին: Սա իր գրեհագրերնետով ներս խուժեց (18 բրիւմերի—1799 նոյեմբեր) Հինգարիւրի Թորբըլի նիստերի դահլիճը, քից պատգամաւորներին, օրէնսդիր ժողովները ցրեած յայտարարեց: 5 դիրեկտորների փոխարէն երեք կոնսուլ յայտարարեցին, որոնցից առաջինը (10 տարով) Նապոլէօն Բոնապարտն էր: Մի քանի շաբաթ անցած նոր սահմանադրութիւն հըրատարակեց, որը առաջին կոնսուլին տալիս էր ամբողջ գործադիր իշխանութիւնը՝ պատերազմ յայտարարելու, հաշտութիւն կնքելու, պաշտօնեաներ և պատգամաւորներ նշանակելու իրաւունքը: Առաջին կոնսուլին էր պատկանում նոյնպէս և օրէնքներ առաջարկելու բացառիկ իրաւունքը: Նոր սահմանա-

դրութիւնը սահմանում էր 4 պալատ. պետական խորհուրդը մշակում էր օրինագծեր, ինիցիատիւան, ինչպէս ասացինք, պատկանում էր առաջին կոնսուլին, արիւրունատը քննադատում էր օրինագծերը, բայց վճռական ձայն չունէր, օրէնսդիր կորպուսը դրական կամ բացասական քէ էր տալիս օրինագծին, առանց քննելու նրանց. սենատի գործն էր սահմանադրութիւնը պաշտպանել:

1804 թ. Սենատը առաջին կոնսուլին ժառանգական կայսերական տիտղոսն առաջարկեց: Ֆրանսիան կայսրութիւն դարձաւ: Յեղափոխութեան լիկւելիզացիան վերջացաւ, սակայն դէպի հինը, նախ-յեղափոխական կարգերին վերադարձն անկարելի էր: Նապոլէօն I-ը տիրապետող բուրժուազիայի կամքի հանձարեղ գործադրողն էր: Բուրժուազիան նրան սրբեց սուր և դայիսոն սլաշապանելու համար յեղափոխութեան տւած բոլոր այն ռէֆորմները, որոնք համապատասխանում էին կապիտալիստական կարգերի պահանջներին: Ազգային կայքի սեփականատէրերի հողերը յայտարարեցին անկապտելի:

Օրէնքի առաջ բոլոր քաղաքացիները հաւասար էին ճնում: Առանց ծագման տարբերութեան ամեն մի քաղաքացի կարող էր ձեռք բերել հարստութիւն և պետական բարձր պաշտօններ: Նապոլէօն Բոնապարտը վերջնականապէս հաստատեց խզճի, աշխատանքի և մրցման սզատութիւնը: Մշակեց քաղաքացիական օրէնքների նոր ժողովածու, որ վերջնականապէս լայնում էր մինչ յեղափոխութիւնը գոյութիւն ունեցող մօնոպոլիտներն ու արտօնութիւնները:

Բոնապարտը գոնէ սկզբունքով պէտք է ճանաչէր ժողովրդի դիրքիւնութիւնը, բոլոր քաղաքացիներին

հրաւիրելով նոր սահմանադրութեան վերաբերմամբ իրանց կարծիքը յայտնելու: Ամեն մի քաղաքացի գրքի մէջ իր ազգանունի դէմ գրում էր իր սահմանադրութեան թեր կամ դէմ լինելը: Նաո քիչ զտնւեցին անկախ քաղաքացիներ, որոնք համարձակեցին արդէն ամենահարող կոնսուլին բացարձակ հակառակ ձայն տալու: Զօրքը նոյնպէս քւէարկում էր: Զարմանալի չէ, որ այդպիսի հանգամափոխերում սահմանադրութեան օգտին 3 միլիոն ձայն էր տւած, հակառակ՝ 1500:

Նապօլէօն I-ը իրան շրջապատեց համարեա ամբողջապէս բուրժուազիայից դուրս եկած խորհրդականներով: Արդէն Կոնսուլնոր ժողովրդական կրթութեան օգտին շատ բան էր արել: Գիտութիւններն ու աղւեստները սկսեցին արձակ ու ազատ զարգանալ: Բացել էին մի շարք հանրակրթական և մասնագիտական (պօլիտեխնիկական դպրոց, գեղարւեստների և արհեստների կոնսերվատորիա, մանկավարժական դպրոց և այլն) բարձրագոյն դպրոցներ և թանգարաններ (Լուվր, բնական պատմութեան թանգարան): Տեխնիկական գիտութիւնների պաշարը աւելի և աւելի հարստանում էր մատեմատիկայի և քիմիայի յառաջագիմութեան շնորհիւ: Նոր գիւտերը փոխարինում էին արտադրութեան հին միջոցներին: Մեքենաների գործածութիւնը աւելի ու աւելի զարգանում էր: Գուրշին դուրս էր քշում ձեռքի աշխատանքը:

1800 թ. բացեց Ֆրանսիական բանկը, որին բանկային թղթեր բաց թողնելու և վարկային գործողութիւններ կատարելու արտօնութիւն էր տրւած: Վարկը աւելի ևս նպաստում էր հին կարգերի բոլոր

արդելքներից վերջապէս ազատւած առևտրի, արդիւնաբերութեան և երկրագործութեան ծաղկմանը:

Հողնորականութիւնն ու աղնւականութիւնը իրանց արտօնեալ դասակարգի նշանակութիւնը կորցրին: Արտազաղթած արհեստակրտտիան և հողնորականութիւնը վերջնականապէս կորցրին իրանց կայքը, որ բուրժուազիայի ձեռքն անցաւ:

Ոչնչացան դասերը, մնացին միայն դասակարգերը: Կապիտալիստական դասակարգը տիրապետում էր, բայց կապիտալիզմի զարգանալովը ուժեղանում էր և միւս, նրա հակառակ դասակարգը՝ պրոլետարիատը:

Բուրժուազիայի տիրապետութիւնը հիմք դրեց բախուր, շահագործւող դասակարգի կուին կապիտալիստների, շահագործողների դասակարգի դէմ: Յեղափոխութիւնը ստեղծեց դասակարգային կուի ազատ սուզարէզ, կուի, որ կարող է վերջանալ միայն այն դասակարգի յաղթանակով, որ ձգտում է ոչ թէ մի դասակարգի միւսի վրայ իշխելուն ի նպաստ, այլ ամբողջ մարդկութիւնը ազատելու, ճշմարիտ հաւասարութեան և իսկական ազատութեան:

Մեծ յեղափոխութիւնը նախադուռն էր մի ուրիշ՝ աւելի նշանաւոր սոցիալիստական յեղափոխութեան:



Պետական Հրատարակչության Հայկ. Սեկցիայի  
Ռուսոյի Բաժանմունքի Հրատարակչուհիները

ԼՈՑՍ ԵՆ ՏԵՍԵԼ

- 1) [REDACTED]
- 2) «Կոմուն. Ինտերնաց. Կոչը Պարսկաստանի, Հայաստանի և Տաճկաստանի կեղեքած աշխատաւորութեան» . . . « 5 ր.
- 3) Ելնա Բրոնինա: «Ինչու ես Սաւետսկի Կառավարութեան պաշտպանը դարձայ» . . . « 10 ր.
- 4) Կ. Մինին: «Ուրբեր եւ Կոմունիստները» . . . « 10 ր.
- [REDACTED]
- [REDACTED]
- [REDACTED]
- [REDACTED]
- 8) Ռուսակով: «Ուրբեր եւ հակա-յեղափոխականները և ինչպէս կուել նըրանց հետ» . . . « 10 ր.
- 9) «Թորհրդային Իշխանութիւնը և ազգային հարցը Ռուսաստանում» . . . « 5 ր.
- 10) «Ամէն մէկ գեղացիի ինչ պէտք է զիտնալ» . . . « 10 ր.
- 11) «Հոկտեմբերեան Յեղափոխութեան III տարեդարձին» . . . « 15 ր.
- 12) Գ. Լինդով: Չրանսիական Մեծ Յեղափոխութիւնը . . . « 60 ր.

« Ազգային գրադարան



NL0409804

ԳԻՆՆ Է 60 Ր.

Գրավաճառներից ոչ ոք նշանա  
լած գնից բարձր ճախելու իր  
ուներ չունի:  
Պետակ. Հրատ. Հայսեկ



**ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՅՈՐԱԿՉՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՎՈՒ  
ՌՈՍՏՈՎԻ ՐԱԺԱՆՍՈՒՆՔ.**

Государственное издат. Армянская Секция Ростов

5000 экз.

Р. В. II